Ձեկուցման մեջ քննության են առնվում տարաբնույթ հաճոյախոսությունները ռուսական լեզվամշակույթում՝ միջմշակութային հաղորդակցման լույսի ներքո: Հաճոյախոսությունները դիտարկվում են գենդերային տարբերակումների տեսանկյունից: Կան արտահայտություններ, որոնք թեև վերաբերում են իգական սեռին, սակայն այնտեղ նշվում են և՛ արական, և՛ կանացի որակները: Օրինակ՝ հայ բանաստեղծ Պարույր Սևակը նշանավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի մասին իր հայտարարություններից մեկում գրում է, որ ծնողներն ու բնությունը բանաստեղծուհուն օժտել են կանացի և արական գծերի հազվագյուտ միաձուլմամբ: Նրա հոգին պարուրված է կանացի քնքշությամբ, իսկ սիրտն այնպես ուժեղ է բաբախում, ինչպես տղամարդու սիրտը: Նրա խոսքում կարելի է լսել մայրական մեղմ ինտոնացիաներ և հայրական ազդեցիկ ու հպարտ նոտաներ:

Վերլուծվում են կենդանանիշ բառեր, բուսանուններ, գունանուններ, երկնային մարմինների անվանումներ պարունակող հաճոյախոսություններ: Ռուսական, հայկական, անգլիական և շատ այլ լեզվական մշակույթներում աղջկան ուղղված տարածված հաճոյախոսությունը նրան վարդի հետ համեմատելն է, քանի որ «վարդ» բառը ասոցացվում է ամենագեղեցիկի, ինչպես նաև երիտասարդության հետ:

Բացի դրանից, քննվում են տարբեր լեզվամշակույթներում համարժեք նշանակությամբ, սակայն տարիմաստ բառեր պարունակող հաճոյախոսություններ: Օրինակ՝ ռուսական և հայոց լեզվական գիտակցության համար «ընկերությունը» կարևորագույն արժեքներից է, որը ենթադրում է շատ խորը կապ և նվիրվածություն, մինչդեռ ամերիկացիները ընկերության նկատմամբ այլ վերաբերմունք ունեն, ինչը մեծ նվիրվածություն չի պահանջում: Ուստի ռուս կամ հայ հասցեատիրոջ շուրթերից հնչող «Դու լավ ընկեր ես» հաճոյախոսությունը համարժեք չէ ամերիկացու շուրթերից հնչած նման հաճոյախոսությանը:

RUSSIAN COMPLIMENTS IN INTERCULTURAL SPACE

Lilit Brutian

Summary

Key words: *gender differences, discourse, zoonyms, coloronyms, communication, lingvoculture, intercultural conflict/failure, pragmatic and sociocultural factors, speech act of compliment, phytonyms*

The report examines various compliments in the Russian language and culture in the light of intercultural communication. Compliments are viewed in terms of gender differences. There are expressions that, although referring to the feminine gender, indicate both male and female qualities. For example, in one of his statements the Armenian poet Paruyr Sevak wrote about the famous poetess Silva Kaputikyan that her parents and nature endowed her with a rare fusion of feminine and masculine traits. Her soul is wrapped in feminine tenderness, while her heart beats as strongly as a man's heart. In her speech, you can hear soft motherly intonations and powerful and proud fatherly notes.

We have analyzed compliments containing zodiac words, plant names, color names, names of heavenly bodies in the article. In Russian, Armenian, British and other cultures, it is common to compliment a girl by comparing her to a rose, as the word «rose» is associated with beauty, as well as youth.

Apart from that, compliments with similar meaning but containing different words in different linguistic cultures have also been discussed. For example, for the Russian and Armenian linguistic consciousness, "friendship" is one of the most important values, implying a very deep connection and devotion, while Americans have a different attitude towards friendship, which does not require much devotion. Therefore, the compliment «You are a good friend» received from Russians or Armenians is not equivalent to the same compliment received from Americans.

ՀՏԴ 036

ԹՎԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Անահիտ Գրիգորյան

Հանգուցային բառեր. *ուղղախոսություն, ուղղագրություն, բառերի կապակցելիություն, բառապաշար:*

Միջառարկայական հիմքով ներկայացվող դասերը կազմակերպվում են ժամանակակից մի շարք մեթոդներով և հնարներով, որոնց ընթացքում տառերի, քերականական բազմաթիվ իրողությունների ուսուցումը կազմակերպվում է ինչպես ընթերցանության, այնպես էլ թվերի և թվանշանների միջոցով: Միջառարկայական հիմունքներով պարապվող դասերը առանձնանում են իրենց ամբողջականությամբ, ինչը նպաստում է աշակերտների համակողմանի գիտելիքների ձեռքբերմանը:

Տարրական դասարաններում միջառարկայական դասերը հիմնականում պտտվում են «Մայրենի» առարկայի առանցքի շուրջ՝ «Մայրենի – Տեխնոլոգիա», «Մայրենի – Մաթեմատիկա», «Մայրենի – Երաժշտություն», «Մայրենի – Կերպարվեստ» և այլ զուգահեռներով, որոնք կարող են նաև վերածվել եռակողմ և քառակողմ դասերի:

Թվական հասկացությունների ուսուցումն ընկած է «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների զուգադիր ուսուցման հիմքում, որն ունի կապակցված խոսքի ուսուցման, կարդացածը հասկանալու, վերարտադրելու, վերլուծելու կարողություններ և հմտություններ զարգացնելու նպատակ: «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների ինտեգրումը յուրաքանչյուր դասարանում կատարվում է հիմնականում պարզից դեպի բարդը գնացող ճանապարհով:

Միջառարկայական կապերը տարրական դասարանների մաթեմատիկայի և մյուս ուսումնական առարկաների հասկացությունները, տեղեկություններն ու փաստերը այն դիալեկտիկական կապերի իրականացումն են ուսուցման գործընթացում, որոնք առօրյա կյանքում գործում են մարդկանց շրջապատող աշխարհում և ճանաչվում են ժամանակակից գիտությունների, մասնավո-

րապես հոգեբանամանկավարժական գիտության կողմից:

Թվական հասկացությունների ուսուցումը կատարվում է դեռևս նախաայբբենական շրջանում՝ մաթեմատիկայի դասի շրջանակներում: Մայրենիի դասերին թվականը որպես խոսք մաս ուսուցանելիս ժամանակակից ինտեգրված ուսուցումը առաջարկում է այն ներկայացնել միջառարկայական կապերի բացահայտման եղանակով: Քննելով բառակապակցության միավորների իմաստաբանական կապակցելիության հնարավորությունները՝ ինտեգրված ուսուցումը առաջարկում է «Այբբենարան» և «Մաթեմատիկա» դասագրքերը համադրման եղանակով ուսուցանել տարրական դասարաններում, որպեսզի հոգեբանական բարդույթավորումներ չառաջանան մի առարկայից մյուսին անցնելիս:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունն էապես պայմանավորված է դասավանդման մեթոդիկայով: Անհրաժեշտ է ուսումնական գործընթացում ներդնել այնպիսի մեթոդներ, հնարներ, միջոցներ, որոնք կխթանեն սովորողի ինքնուրույն և ստեղծագործական ունակությունների զարգացումը, դասը կդարձնեն առավել հետաքրքիր: Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների ու հնարների կողքին գործածության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը: Անհնար է պատկերացնել այս գործընթացն առանց ուսուցչի ու նրա աշխատանքի վերակառուցման և կատարելագործման: Օրախնդիր հարց է, թե կրթական բարեփոխումների արդի պայմաններում ուսուցիչը որքանով է պատրաստ ուսուցման մարտավարությունների և նոր մեթոդների ընտրությանն ու կիրառմանը: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում: Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Տարրական դասարաններում ընթերցարանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև՝ «Երաժշտություն», «Տեխնոլոգիա», «Մաթեմատիկա» և այն:

Հիմնախնդիրները: «Մայրենի» առարկայի գլխավոր առանձ-

նահատկությունը գործնական ուղղվածությունն է: Այդ նպատակաղրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալու բառի ուղղախոսական և ուղղագրական կանոնների ճիշտ կիրառմանը, բառին ու նրա իմաստին, բառօգտագործմանը, բառերի իմաստային ու քերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի բառաձևերի դերին: Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, իմացական դաշտի ընդլայնմանը [4, 320]:

Հիմնախնդիրներին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Միջառարկայական ուսուցում ասելով՝ նկատառվում է տարբեր առարկաների և ուսումնական նյութերի՝ իմաստով ու ձևով միմյանց լրացնող, միասնական ամբողջությունը, որը երկու դասընթացների խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դասը: Միջառարկայական կապերը պետք է նպատակաուղղված լինեն օբյեկտիվ աշխարհի բաղկացուցիչ մասերի եռամիասնությանը՝ «բնություն-մարդ-հասարակություն» հասկացության ըմբռնմանը:

Ուսուցումը և գիտելիքի յուրացումը պետք է իրականացնել ակտիվ հենքի վրա: Ջ. Դյուիի այն դրույթը, թե պետք է երեխաներին օգնել գիտելիքը ակտիվորեն յուրացնելու և ոչ թե նրան դարձնել պասիվ ընդունող, պատկերավոր ձևակերպել է Գ. Քոմենջերը. «Երեխան անոթ չէ, որը պետք է լցնել, այլ ջահ, որը պետք է վառել» [5, 76]: Ուստի ուսումնական ծրագիրը չպիտի լինի անփոփոխ, այլ հասարակական-մշակութային ոլորտներում շարժումները աղբյուր և խթան պետք է դառնան անընդհատ ընտրության և կրթության բովանդակության փոփոխության համար:

Ուսուցչին պիտի տալ ստեղծագործելու հնարավորություն, իսկ աշակերտի մոտ զարգացնել քննադատական մտածողություն, տրամաբանություն և ինքնուրույն բացահայտելու ձգտում [5, 72]:

Իտալացի մանկագիր Ջանի Ռոդարին «Ստեղծագործական երևակայության քերականություն» գրքում մեջբերում է անում Նովալիսից. «Եթե ֆանտազիային այնպես տիրապետեինք, ինչպես տրամաբանությանը, հորինելու արվեստը կբացահայտվեր» [10, 8]:

Եթե աշակերտի հետ աշխատելիս շեշտադրենք նրա երևակայության զարգացումը, ապշեցուցիչ գյուտերի կհանդիպենք, քանի որ նա ինքն է հաճախ զարմանում, թե ինչպես ծնվեց բառերով արտահայտված այդպիսի պատկեր: «Սովորող-սովորող», «ուսուցիչ-սովորող» համագործակցության, միասին երևակայելու և պատկերացնելու արդյունքում ծնունդ են առնում հեքիաթներ, պատմություններ, որոնք թաքնված են մարդու ենթագիտակցության խորքում: Սա հեքիաթի և իրականության հանդիպումն է՝ բառերի կերպարանք առած:

Հոդվածի նպատակը: Ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառմամբ ներկայացնել «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաների միջառարկայական կապը թվական հասկացություններ դասավանդելիս:

Հիմնական նյութի շարադրանքը: Մայրենիի ուսուցումը դպրոցական ամենադժվար աշխատանքներից մեկն է դառնում, երբ չկան կենդանի հետաքրքրություն առաջացնող առարկաներ, երբ լեզուն միայն դասերը կրկնելու միջոց է: Նույն կերպ անդրադառնալով ուսուցման ոլորտին՝ պետք է նշել, որ ուսուցչի կոչումն է «ժանգեր քերելով» աշակերտների սեփականությունը դարձնել գիտելիքների քնած պաշարը [5, 60]:

Ուսումնական ծրագրերի ինտեգրման նպատակը աշակերտների առաջադիմության մակարդակի բարձրացումն է: Ինտեգրված ուսուցում կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ 1900 թ. «Դպրոցը և հասարակությունը» աշխատության մեջ անդրադարձել է Ջոն Դյուին՝ նշելով. «Բոլոր գիտություններն սկիզբ են առնում մեր միակ մոլորակի և մեր ապրած միակ կյանքի պահանջներից: Մենք չունենք շերտավորված երկրագունդ, որի մի շերտը մաթեմատիկական, մյուսը՝ ֆիզիկական, մեկ ուրիշը պատմական բնույթ ունենա և այսպես շարունակ» [5, 62]:

Ինտեգրված ուսուցման ծրագիր կազմելիս տարբեր առարկա-

ների գիտելիքներ հիմնվում են մեկ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Պետք է հիշել, որ ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերվում են միավորված (ինտեգրված) ծրագրի հետևյալ տեսակները.

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary) [9, 165]:

Միջառարկայական ուսուցումը դասի հատուկ տեսակ է, որը ներառում, միավորում է մեկ հասկացություն ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում: Տարրական դասարաններում ուսուցանվող «Մաթեմատիկա», «Մայրենի» և մյուս առարկաների միջև փոխադարձաբար օգտագործվող միջառարկայական կապերը պետք է դիտել որպես անժխտելի դիդակտիկական պայման: Այսպիսի դասի ընթաքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանը և հարստացմանը: Կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները:

Միջառարկայական դասը դասի առավել ակտիվ ձև է, որի ընթացքում աշակերտը ձեռք է բերում.

- հոգատարություն շրջապատի նկատմամբ,
- թիմում աշխատելու կարողություն,
- ինքնուրույնություն,
- բարդ իրավիճակում կողմնորոշվելու կարողություններ,
- վերլուծական, դատողական կարողություններ,
- խոսքը ճիշտ ձևակերպելու հմտություն [3, 256]:

Միջառարկայական դասի ժամանակ մեկ թեմայի շուրջ տար-

վող քննարկումները, զրույցը, խաղերն ու վարժությունները աշակերտին օգնում են լինել ակտիվ, զգոն, ուշադիր և ամենակարևորը՝ բացահայտող: Պարբերաբար անցկացվող միջառարկայական դասերն առավելապես նպաստում են աշակերտի խոսքի զարգացմանը՝ ձևավորելով համեմատելու, ընդհանրացնելու և եզրակացնելու կարողություններ:

Ժամանակակից ինտեգրված դասին ներկայացվեղ պահանջներն են՝

- նոր մեթոդների կիրառում,
- փոխազդեցություն, փոխուսուցում,
- աշակերտի ակտիվություն,
- համագործակցություն,
- ինքնաարտահայտման խրախուսում,
- հետադարձ կապ:

Կապակցված խոսքի զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, մտածողության զարգացման հետ շփման ձևերի բարդության հետ:

Աշակերտների բառապաշարի հարստացումն սկսում է նրանց ուսումնառության առաջին իսկ տարվա սկզբից: Եվ արդեն տարրական դասարաններում թե՛ հայոց լեզվի, թե՛ մյուս առարկաների դասընթացների շնորհիվ զգալի չափով մշակվում ու հարստանում է նրանց բառապաշարը:

Աշակերտի բառապաշարը այստեղից-այնտեղից ընկած բառերի սոսկ քանակական գումար չէ: Բառերը աշակերտի ուղեղում որոշակիորեն համակարգված են իրենց իմաստային կողմով, կիրառական, կազմության և այլ հատկանիշներով:

Աշակերտների բառապաշարի վրա տարվող աշխատանքը չպետք է սահմանափակվի նրանց իմացած բառերի քանակի սոսկ մեծացումով: Այդ աշխատանքը պետք է տանել՝ ապահովելով հետևյալ պահանջները.

- աշակերտների բառապաշարի ոչ միայն քերականական, այլև որակական կազմի հարստացում,
- բառերի դիպուկ գործածություն,
- բառապաշարի մաքրություն [1, 13]:

Ինչպես բառապաշարի հարստացման, այնպես էլ լեզվական օրինաչափությունների ուսումնասիրման համար մայրենի լեզվի ծրագրերն ու դասագրքերը առաջարկում են որոշակի համակարգ, և ուսուցիչները հստակորեն պատկերացնում են, թե որ դասարանում ինչ գիտելիքներ են ուսուցանվում, ինչ հաջորդականությամբ, ինչ խորությամբ ու ծավալով [2, 33]։

Աշակերտների կրթության ու դաստիարակության հարցում ուսուցման համակարգված մոտեցման համընդհանուր գիտակցության առկայությամբ հանդերձ հաստատված չէ միջառարկայական կապերի ամբողջ համակարգը, դպրոցական տարբեր առարկաներում արտացոլված չէ միջառարկայական կառուցվածքը, և որոշված չեն դրանց առանձնահատկությունները։

Մայրենիի դերը՝ որպես այլ առարկաների դասավանդման միջոց, պայմանավորված է նրա դիդակտիկական նպատակներով։ Հայտնի է, որ մայրենի լեզուն կապված է բոլոր առարկաների ուսուցման հետ [7, 4]։

Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի մասին տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ։ Տարբեր առարկաներից աշակերտների ձեռք բերած գիտելիքները պետք է դիտվեն փոխադարձ կապերի մեջ, իսկ դա կարող է ապահովել միջառարկայական կապերի շնորհիվ։ Դրանցով են համակարգվում աշակերտների գիտելիքները. դրանք նպաստում են, որ աշակերտները միևնույն երևույթը դիտարկեն տարբեր տեսանկյուններից, ընդհանրացնող եզրակացություններ անեն։

Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում։ Միջառարկայական և ներառարկայական կապերի հաստատումը տարրական դասարաններում դասավանդող ուսուցչի աշխատանքային գործունեության անբաժանելի մասն է։ Դա սկսվում է ուսուցչի կողմից դասը պլանավորելուց և շարունակվում է «ուսուցիչ-աշակերտ» հարաբերության բոլոր փու-

լերում: «Մայրենի-այլ առարկաներ» շղթայում այս կապը հաստատվում է ոչ այնքան լեզվի, որքան այլ առարկաների ուսուցման տեսանկյունից, քանի որ լեզուն ցանկացած առարկայից գիտելիքների ձեռքբերման հիմնաքարն է [7, 3]:

Ինտեգրատիվ ուսումնական ծրագրերում չկա գիտելիքի արհեստական բաժանում առանձին առարկաների մեջ, և մայրենիի ու մաթեմատիկայի դասերի համադրման արդյունքում աշակերտներն իրենք են հիմնական նմանություններ գտնողները, որի հիման վրա էլ կառուցողական կրթության հիմունքներով դասավանդող ուսուցիչը կազմակերպում է աշակերտակենտրոն դաս, որի ընթացքում նոր դպրոց եկած աշակերտները բացահայտում են իրենց համար կարևոր տեղեկատվություններ և դպրոցում սովորած իրողություններն սկսում են համադրել առօրեական իրողություններին՝ պատասխանելով «Ո՞րն է ամենից կարևոր», «Ի՞նչ պետք է իմանալ» հարցադրումներին: Ուսուցչի և աշակերտների հետ ավանդական ձևերով աշխատելուն զուգընթաց՝ աշակերտները սովորում են ուսումնական բազմաթիվ վարժությունների շրջանակներում աշխատել թե՛ փոքր խմբերով, թե՛ ինքնուրույն [6, 55]:

Արաբական թվանշանները «Այբբենարանում» սկսում են կիրառվել **Է** տառի դասի շրջանակներում: Աշակերտները, արդեն ծանոթ լինելով թվականներին, կարողանում են համապատասխան թվականներ ունեցող նկարներին տրվող անունները տեղադրել համապատասխան վանդակներում: Մաթեմատիկական գումարման գործողությունը նպաստում է **է, ո, և** տառերի ուսուցմանը, այսպես **յ** + **է** = **է, վ** + **օ** = **ո, յ** + **է** + **վ** = **և**: Բառամիջում **և** բառասկզբում ունեցած հնչյունային տարբերությունների ուղղագրության ուսուցումը զուգորդվում է մեկ և երկու թվական բառերի հնչյունագրումով: ***Երեք*** բառը ներկայացվում է որպես այս երկու կանոնների համադրում: Աստիճանաբար ուսուցանվում են գրերը՝ հնարավորության դեպքում համադրվելով թվականներին, ինչպես՝ ***4*** թվականի գրությանը աշակերտները ծանոթանում են **չ** տառի ուսուցման շրջանակներում: **Բ** տառի շրջանակներում կիրառում են ***7*** թվականը, որը խորհրդանշում է շաբաթվա օրերի քանակը: **Փ** տառի շրջանակներում աշակերտները սովորում են ***մատնոց*** բառի

հանելուկը՝ «Մի փոսի վրա հարյուր փոս»: Այստեղ զուգահեռաբար պետք է բացատրել ***հարյուր*** բառի ուղիղ՝ մաթեմատիկական և գեղարվեստական-փոխաբերական նշանակությունները: Յուրացնելով թվականական և գրային համակարգերը՝ աշակերտները հասկանում են, որ թվանշանները թվականների գրային նշաններն են, իսկ տառերը՝ հնչյունների: Նշանային համակարգերը ամենուր են, օրինակ՝ մաթեմատիկայում առանձին նշաններով են արտահայտվում ինչպես գումարման, հանման, հավասարման, մեծի, փոքրի և այլ նշանները, այնպես էլ պատկեր-նշաններով են արտահայտվում երկրաչափական մարմինները [6, 341]:

Թվականը որպես խոսքի մաս ուսուցանվում է չորրորդ դասարանում, որտեղ ներկայացված «Թվականի երգը» մինչ այդ սովորած գիտելիքների ամփոփումն է: Ա. Տեր-Գրիգորյանը առաջարկում է թվականների ուսուցումը կազմակերպել ինդուկտիվ եղանակով՝ լեզվական որոշակի փաստերից դեպի դրանց ճանաչումը, գնահատումը և ընդհանրացումը կատարելով [11, 377]:

Թվականների ուսուցման ժամանակ կարևոր է նաև հարցադրումը: Ինչպես առարկայի հատկանիշ ցույց տվող ածականները, այնպես էլ թվականները առարկայից դուրս գոյություն չունեն, և դրանք նույնպես կապակցվում են գոյականներին: Այս դեպքում նույնպես ի հայտ են գալիս սահմանափակումներ, քանի որ կան գոյականներ, որոնք թվական լրացումներ չեն առնում, ինչպես՝ *կաթ, ջուր, մաթեմատիկա, ուրախություն* և այլն:

Տարրական դասարաններում աշակերտներին են ներկայացվում թվականների երկու տեսակները՝ քանակական և դասական: Հատկապես կարևոր է թվական բառերի ուղղագրության հիմունքների ուսուցումը, որի համար մասնագիտական գրականության մեջ առաջադրվում է կատարել մի շարք մարզողական վարժություններ:

Տարրական դասարաններում ուսուցանվում են թվականների գրության մի քանի ձևեր.

1. արաբական թվանշաններ – 1, 2, 3, 4, 5, 6, 100, 214, 258, 456 և այլն,
2. հռոմեական թվանշաններ – I, II, III, IV, V, VI, X, XI և այլն,
3. հայկական այբուբենի տառեր – Ա, Բ, Գ, ԺԱ, ՌԺԱ և այլն,

4. ամբողջական բառերով գրություններ - տասնմեկ, հարյուր մեկ և այլն: Այս շարքում կարևոր է հատկապես, **ինը** // **ինն, տասը** // **տասն** բառերի ուղղագրության ուսուցումը:
5. խառը գրություն ունեցող թվանշաններ – 1-ին, 2-րդ, 100-րդ և այլն:

Թվականների ուսուցման ժամանակ հատկապես կարևոր է դրանց բառային արտահայտությունների գրության կանոնների ներկայացումը, որը խորհուրդ է տրվում կազմակերպել միջառարկայական դասերի շրջանակներում: Աշակերտները, հիշելով «Մաթեմատիկա 1, 2»-ում սովորած գումարման առանձնահատկությունները, դրանք Մայրենիի դասի շրջանակներում փորձում են գրել ամբողջական բառերով՝ կիրառելով բարդ բառերի ուղղագրության հիմունքները: Աշակերտներին տեսանելի լինելու նպատակով պատի թերթին գրում ենք հետևյալ օրինակները, որից պարզ է դառնում, որ տասնավորները գրվում են միասին, իսկ հարյուրավորներն ու հազարավորները՝ առանձին:

Եզրակացություն: Թվական հասկացությունների ուսուցումն ընկած է «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների զուգադիր ուսուցման հիմքում, որն ունի կապակցված խոսքի ուսուցման, կարդացածը հասկանալու, վերարտադրելու, վերլուծելու կարողություններ և հմտություններ զարգացնելու նպատակ: «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների ինտեգրումը յուրաքանչյուր դասարանում կատարվում է հիմնականում պարզից դեպի բարդը գնացող ճանապարհով: Միջառարկայական հիմքով ներկայացվող դասերը կազմակերպվում են ժամանակակից մի շարք մեթոդներով և հնարներով, որոնց ընթացքում տառերի, քերականական բազմաթիվ իրողությունների ուսուցումը կազմակերպվում է ինչպես ընթերցանության, այնպես էլ թվերի և թվանշանների միջոցով: Միջառարկայական հիմունքներով պարապվող դասերը առանձնանում են իրենց ամբողջականությամբ, ինչը նպաստում է աշակերտների համակողմանի գիտելիքների ձեռքբերմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1973, 75 էջ:
2. Աթալյան Հ., Կապակցված խոսքի ուսուցման համակարգը, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1986, 184 էջ:
3. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա. և այլք, Ինտեգրված թեմատիկ միավորներ, Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2003, 255 էջ:
4. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, «Այրեքս» հրատարակչություն, 2007, 319 էջ:
5. Դյուի Ջ., Դպրոցն ու հասարակությունը, Երևան, «Դպիր» մանկավարժական հանդես, 2013, 88 էջ:
6. Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ: Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, «Այրեքս» հրատարակչություն, 2004, 320 էջ:
7. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ, 2011: https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923 (Հասանելի է 10.03.2022):
8. Մալխասյան Շ., Մայրենիի և մաթեմատիկայի դասավանդումը առաջին դասարանում միջառարկայական միավորման սկզբունքով // Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2017, 1, Պրակ Ա: էջ 339-344:
9. Մարգարյան Ս., Տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում ուսուցման ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին// «Մխիթար Գոշ», 2019, 2: էջ 146-153:
10. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, «Շաղիկ» հրատարակչություն, 1995, 217 էջ:
11. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, 564 էջ:

ИНТЕГРИРОВАННОЕ ОБУЧЕНИЕ СЛОВ, ВЫРАЖАЮЩИХ ЧИСЛО, В НАЧАЛЬНЫХ КЛАССАХ

Анаит Григорян

Резюме

***Ключевые слова**: орфоэпия, правописание, связность слов, словарь*

Обучение чисел лежит в основе интегрированного преподавания предметов «Родной язык» и «Математика», с помощью которого производится обучение связной речи, а также навыкам понимания, воспроизведения и анализа. В каждом классе интеграция «Родного языка» и «Математики» осуществляется в основном по принципу от простого к сложному.

В начальной школе междисциплинарные уроки обычно осуществляются на занятиях по родному языку: «родной язык – технология», «родной язык – математика», «родной язык – музыка», «родной язык – изобразительное искусство» и другие. Эти уроки могут также стать трехсторонними и четырехсторонними.

Междисциплинарные уроки организованы с использованием ряда современных методов и приемов, в ходе которых буквы и грамматические реалии изучаются как через чтение, так и с помощью чисел и цифр. Междисциплинарные уроки отличаются своей полноценностью, что способствует получению учащимися разносторонних знаний.

Числовые концепции преподаются в доалфавитный период начальной школы как часть математики. Что касается обучения чисел как части речи на занятиях по родному языку, то современное интегрированное обучение предлагает обучать их таким образом, чтобы выявить межпредметные связи. Интегрированное обучение, основываясь на изучении возможностей смысловой связи между словарными единицами, предполагает комбинированное преподавание их по букварю и учебнику по математике в начальных классах с тем, чтобы не вызывать психологических сложностей при переходе с одного предмета на другой.

INTEGRATED TEACHING OF WORDS EXPRESSING NUMERAL MEANINGS IN ELEMENTARY SCHOOL

Anahit Grigoryan

Summary

***Key words**: orthoepy, spelling, word collocability, vocabulary*

The study of numerical concepts underlies an integrated teaching of the subjects "Native Language" and "Mathematics", which aims at improving coherent speech and developing comprehension, reproduction, and analytical skills. In each grade, the integration of "Native Language" and "Mathematics" is achieved mainly by moving from the simple to the complex.

In elementary school, the classes presented on interdisciplinary basis usually revolve around the subject "Native Language": Native Language – Technology, Native Language – Mathematics, Native Language – Music, Native Language – Art and other parallels. These lessons can also become trilateral or quadrilateral.

Interdisciplinary lessons are organized with the use of a number of modern methods and techniques, during which the letters and grammatical realities are taught both through reading and by means of numbers and digits. Interdisciplinary lessons are distinguished by their completeness, which helps students acquire comprehensive knowledge.

Numerical concepts are taught in the pre-alphabetic period of elementary school as part of Mathematics. What concerns teaching numbers as a part of speech during the classes of Native Language, modern integrated teaching suggests presenting them in a way to reveal interdisciplinary connections. Based on the study of the possibilities of semantic connection between vocabulary units, integrated learning suggests combined teaching of the "ABC book" and "Mathematics" textbooks in elementary school in order not to cause psychological complications when switching from one subject to another.

ՀՏԴ 81՝38

ՇԵՐՎՈՒԴ ԱՆԴԵՐՍՈՆԻ ԿԱՐՃ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Նինա Ջաղինյան

Հանգուցային բառեր. *կարճ պատմվածք, գրական հնար, պարզություն, անմիջականություն, մեկուսացում, խորթացում, արտահայտչամիջոցներ, խորհրդանիշներ*

20-րդ դարի ամերիկյան և համաշխարհային ռեալիստական գրականության խոշորագույն ներկայացուցիչներից է Շերվուդ Անդերսոնը, որն իրավամբ համարվում է կարճ պատմվածքի մեծագույն վարպետ և այդ ժանրի հիմնադիրներից: Նրա ասելիքային կերպը հասարակ է, անպաճույճ, առավել հակված խոսակցականի պարզությանը, բայց միևնույն միջոցին՝ նաև գրագետ՝ զերծ որոշ լեզվական պայմանականություններից: Նրա «Ուայնսբըրգ, Օհայո» պատմվածաշարը ներկայացնում է գավառական աննշան մի քաղաքի մարդկանց միայնությունն ու մեկուսացումը հասարակությունից՝ ծվարած իրենց անձուկ միջավայրում՝ «ամերիկյան երազանքի» տիրույթում: Անդերսոն իրատես գրողը մարդասիրական խոր զգացումով և ներողամտությամբ, երբեմն էլ երգիծանքով է լցված իր համար հարազատ քաղաքի մարդկանց հույզերի, անգամ որոշ մեղանչումների նկատմամբ: Նրան խորթ չէ այդ ամենը, քանզի նա իրեն մեկն է համարում նրանցից՝ հաճախ հենվելով իր սեփական կենսափորձի վրա: Ուայնսբըրգյան հերոսները, աշխարհից տևական մեկուսացման ու խորթացման մեջ, ապրում են խռովված իրենց տագնապների, հույզերի, անհույսցանկություն անիրական երազանքներով: Անդերսոն-հեղինակը այդ շարքի իր գործերում կարծես անընդմեջ խորհրդանիշներ է գործածում, դրանք կարող է լինեն «ձեռքեր», «թենդի» և այլն: Խորհրդանիշ է ոչ միայն պատրանազերծ գավառական քաղաքը՝ իր մշտարթուն հոգսերով, այլև հեղինակային գործերի վերնագրերի մեծ մասը՝ որպես շատ դեպքերում ասելիքի այլաբանական ըմբռնում: Անդերսոնի, առանց չնչին բացառության, բոլոր գործերը

կարելի է և պետք է դիտարկել հոգեբանական, խոհափիլիսոփայական դիտանկյունից, քանզի նրան մշտապես հուզում է մարդանհատի հոգին ու շատ դեպքերում՝ նրա հանիրավի խաթարված ճակատագիրը: Մեր աշխատության մեջ կանգ ենք առել առավելապես հեղինակի մի շարք գործերի ոճական վերլուծության վրա՝ պարզելու Անդերսոն իրապաշտ գեղագետի յուրատիպ լեզվամտածողության հնարավոր խորանիստ շերտերը: Մանրազնին քննության են առնված գրողի «Ձեռքերը» և «Թենդի» գործերը՝ լեզվապատկերավորման տեսանկյունից:

Շերվուդ Անդերսոնի կարճ պատմվածքները գրված են ռեալիզմի, մոդեռնիզմի, երբեմն էլ ռոմանտիկ անիրականության ինքնատիպ մոտեցմամբ: Հատկապես ռեալիստական սկզբունքը իրապես հանդես է գալիս որպես գրողի գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգի կարևոր բաղադրիչ: Իր անհատնում բազմաշերտ տաղանդի շնորհիվ Անդերսոն հեղինակը՝ որպես փոքր կտավի անառարկելի վարպետ, ուղենիշ է դարձել հետագա գրական սերունդների համար՝ Էռնեստ Հեմինգուեյ, Ուիլյամ Ֆոլքներ և այլք: Նրա ստեղծագործական ժառանգությունը հսկայական ներդրում է ոչ միայն ժամանակակից ամերիկյան դասական, այլև համաշխարհային գրական անդաստանում:

«Ձեռքերը» ստեղծագործության քննությունը

Շերվուդ Անդերսոնը ինչպես ամերիկյան, այնպես էլ համաշխարհային ռեալիստական գրականության մեջ իրավամբ համարվում է նորարար կարճ պատմվածքի ժանրում, թեև իրականում առավելապես հայտնի է միայն մի գլուխգործոցով, այն է՝ «Ուայնսբըրգ, Օհայո» պատմվածաշարը: Իր գործերում նա հեղափոխական մոտեցում է հանդես բերել կարճ պատումի կառուցվածքի հարցում. սյուժեն հարթ է, ուղղակի ասված, լեզվաոճը՝ անպաճույճ ու հստակ: Հեղինակի թեմատիկ մտածումները ևս նորարարական են:

Շերվուդ Անդերսոնի նորավեպերն ասես ի հայտ են գալիս իր իսկ ապրած կյանքի ապրված պահերից: Նրա հերոսները առանձնապես չեն կարևորում նյութական բարեկեցությունը՝ որպես առաջնային արժեք, ինչպես նաև դրան ուղեկցող սոցիալական և

բարոյական պայմանականությունները և ըստ այդմ փորձում են փնտրել առավել հոգևոր, առավել կենսական գոյություն [8]: Նա այսօր համարվում է 20-րդ դարի ամերիկյան գեղարվեստական գրականության ամենակարևոր դեմքերից մեկը, որը համակցել է դարավերջի ռեալիզմը գրեթե բանաստեղծական ինքնաիտողականության հետ և այն ուղղել ժամանակակից մարդու թուլություններին և անվստահություններին [6]: Հեղինակի ուայնսբըրգյան թեմատիկան մեծապես վերաբերում է այդ գավառական քաղաքի անհատ քաղաքացիների և նրանց շրջապատող աշխարհի միջև եղած փոխհարաբերությանը: Քանի որ նրա յուրաքանչյուր պատմվածք նախ և առաջ սևեռում է մեկ կերպարի վրա, պատումի հեղինակը շարունակաբար զարգացնում է այս թեմաները, երբեմն մի նոր խոր միտք հաղորդում արդեն ծանոթ կերպարներին [10]: Անդերսոնի գրական մոտեցումը նատուրալիստականի և ռեալիստականի յուրօրինակ խառնուրդ է: Խոսելով նրա լեզվառճի մասին՝ պիտի հավաստել, որ նա հիմնականում գործածել է սահմանափակ բառապաշար, որը երբեմն խիստ խոսակցական է, այդ իսկ պատճառով նրա ասելիքը դառնում է ռիթմիկ, մեղեդային, հուզական, նաև անկաշկանդ հատկապես կրկնությունների միջոցով: Նրա գործերին յուրօրինակ հմայք է հաղորդում զարմանք-խորթաթափանցություն միակցությունը: Անդերսոնյան ոճի ակնառու գծերից է շարահյուսական կառույցի ծայրահեղ պարզությունը: Նրա խոսքը ոճական առումով առանձնակի է՝ ոչ երբեք նման այլոց: Նա մշտապես փորձում է վերակերտել կյանքը, որպեսզի իր պատումները ավելի շուտ լինեն երևակայության արգասիք, քան ճշգրիտ պատկերում: Հեղինակի պատկերած խորհրդանիշների միջոցով է, որ մարդկային խոր ապրումներն ու տագնապները, հուզաթաթավ սերը, հոգեկան լարվածությունը վարպետարժան պատկերայնությամբ փոխանցվում է մեզ: Հեղինակը իր բոլոր գործերում գեղարվեստի անդուլ լեզվով սեփական փորձառությամբ է շղարշում իր կերտած կերպարների կյանքն ու փոխհարաբերությունները այլոց հետ: Թեև լինելով գավառական թեմատիկ գրող, շեշտադրում անելով սահմանափակ թվով անձանց իր պատումներում՝ այնուամենայնիվ նա մնում է իր ժամանակի առաջամարտիկ

գրող՝ իր ուրույն վարակիչ պատմողական հնարքով: Իր գրականության ականջալուր հեղինակներին նա մշտապես հորդորում է խորությամբ ուսումնասիրել մարդուն, չսևեռվել միայն սյուժեի վրա, քանզի կարևորը մարդն է, նրա հոգին, մտածումներն ու երազանքները:

Նրա խոր փիլիսոփայության մեջ ներակա է եթե ոչ իրական փրկության գաղափարը, ապա գոնե առկա է երևակայական-ցանկալին: Անկախ այս տեսակետային սահմանափակումից՝ Անդերսոնը արժեքավոր կենսական խիզախում է կատարել՝ որոնելու կյանքի իրական իմաստը գեղարվեստական խոսքի մեջ: Անդերսոնի գրական հերոսները պատկանում են առաջին համաշխարհային պատերազմի և անկումայնության շրջանի սերնդին, մի սերունդ, որ պարզել է իր նյութական անկախությունը, քաղել «ամերիկյան երազանքի» դառը պտուղները: Նա, իրավամբ, ամերիկյան գողտրիկ գավառական քաղաքի ամենաառաջին խորամիտ ու խորաթափանց մեկնիչներից մեկն է: Իր գրական կյանքի կիզակետին նա մի ողջ գրողական սերնդի ուղենիշ է եղել, որը փորձում էր բուռն կերպով իր խոսքը հասցնել արվեստի մակարդակի:

Մեր հետազոտության մեջ հիմնականում կանգ ենք առել հեղինակի մի շարք կարճ պատմվածքների լեզվառճական առանձնահատկությունների վերհանման վրա՝ ներկայացնելով մեր թարգմանական տարբերակը: Մանրազնին քննության ենք ենթարկել «Ձեռքերը» և «Թենդի» գործերը: Առաջին պատումում առանձնակի կարևորություն ունեն ձեռքերը՝ որպես խորհրդանիշ, ինքնատիպ հաղորդակցային միջոց: Գլխավոր հերոսը՝ Ուինգ Բիդլբոմը, ասես քրիստոսանման կերպար է, սակայն եթե այդպես էլ է, Անդերսոնը նշում է, որ Քրիստոսը չհասկացված է և պարտված ժամանակակից աշխարհում [9]: «Ձեռքերը» պատմվածքը սկսվում է մի նախադասությամբ, որն ունի կուռ կառուցվածք և հավաստի գլխավոր դերակատար, որին հեղինակը ներկայացնում է որպես հուզական խռովքի մեջ ընկած մի մարդու: Այսպես. “Upon the half decayed veranda of a small frame house that stood near the edge of a ravine near the town of Winesburg, Ohio, a fat little old man walked nervously up and down” [7, 9]: «Օհայոյի Ուայնսբըրգ քաղաքին մերձ

խոր կիրճին մոտ միօրինակ շարված պստիկ տներից մեկի կիսավեր պատշգամբում փոքրամարմին հաստլիկ մի ծերուկ նյարդայնացած ետ ու առաջ էր քայլում» [4, 2], [5, 48]: Հեղինակի գրին շատ հարազատ է պատկերավորման միջոցների առատությունը: Ահա այդպիսի մի օրինակ. “Across a long field that had been seeded for clover but that had produced only a dense crop of yellow mustard weeds, he could see the public highway along which went a wagon filled with berry pickers returning from the fields” [7, 9]: «Երկայնաձիգ դաշտից անդին, ուր երեքնուկ էր մի ժամանակ ցանված եղել, և որը, սակայն, սոսկ դեղին խիտ մանանեխամոլախոտ էր ծլարձակել, ծերուկին տեսանելի էր մայրուղին, որով առաջ էր ընթանում դաշտից տուն դարձող հատապտղահավաքներով լեցուն մի սայլ» [4, 2], [5, 48]: Այստեղ մակդիր ոճական միջոց է օգտագործված, ինչպես նախորդում: Մակդիրները գործուն ներկայություն ունեն ինչպես այս, այնպես նաև հետագա մյուս կառույցներում. ահավասիկ. “The berry pickers, youths and maidens, laughed and shouted boisterously” [7, 9]: «Պտղահավաքները՝ ջահել աղջիկ ու տղա, աղմկալի ծիծաղում էին ու գոռում-գոչում» [4, 2], [5, 48]: Այստեղ հեղինակը փորձում է ընդգծել տվյալ միջավայրի աղմկոտ ու անհոգ լինելը՝ որպես շփոթահար ծերուկի հակոտնյա, որը արտահայտված է բազմաշաղկապ ոճական միջոցով: Այն գրողի նախընտրած հնարքներից մեկն է իր շատ պատումներում: Դրան զուգահեռ նաև կրկին մակդիր կա այստեղ՝ շաղախված երգիծանքով: Առաջինում բնորոշվում է աղջկական նուրբ ձայնը, մինչդեռ երկրորդը ընդգծված արհամարհանք ու ծաղր է ծերուկի հանդեպ՝ նաև ձայնարկություն-բացականչության միջոցով: «Երկայնաձիգ դաշտից օդի մեջ ձգվեց-տարածվեց աղջկական բարալիկ մի ձայն. “Over the long field came a thin girlish voice. “Oh, you, Wing Biddlebaum, comb your hair, it’s falling into your eyes”, commanded the voice to the man, who was bald and whose nervous little hands fiddled about the bare white forehead as though arranging a mass of tangled locks” [7, 9]: «Հե՛յ, Ուինգ Բիդըլբում, մազերդ սանրի, աչքերդ են ընկնում»,– կարգադրեց ձայնը մարդուն, որը ճաղատ էր, և որի նյարդային մանրիկ ձեռքերը անմիտ շարժվում էին ճերմակ լերկ

ճակատով մեկ, ասես զարդարելիս լինեին խռիվ մազերի հոծ մի զանգված» [4, 2], [5, 48]: Այստեղ փոխաբերությանը զուգահեռ ակնառու է նաև գեղարվեստական համեմատության գործածումը՝ որպես հերոսի կարծեցյալ արդարացումի մի հուսահատ շարժում: Պատումի մեջ առկա ոճական ընդգծուն հնարների ներկայությունը հրաշալի հնարավորություն է ստեղծում ասելիքին գեղագիտական հմայք հաղորդելու առումով: Հաջորդ կառույցի մեջ երկու ոճական հնար կա՝ կրկին մակդիր՝ շաղախված բաղաձայնույթով, որ պատկերում է կերպարի ներքին խռովքն ու տագնապները. “Wing Biddlebaum, forever frightened and beset by a ghostly band of doubts, did not think of himself as in any way a part of the life of the town where he had lived for twenty years” [7, 9]: «Ուինգ Բիդըլբոմը՝ մեկընդմիշտ վախեցած ու պատված ցնորական կասկածների կապանքով, ոչ մի կերպ չէր համարում իրեն մի մասնիկն այն քաղաքի, ու որ քսան տարի ապրում էր արդեն» [4, 2], [5, 48]: Այստեղ միանշանակ ընդգծված է նաև արտաքին աշխարհից նրա մեկուսացված լինելու փաստը: Այդպիսի մի օրինակ է նաև հետևյալը. “In the presence of George Willard, Wing Biddlebaum, who for twenty years had been the town mystery, lost something of his timidity, and his shadowy personality, submerged in a sea of doubts, came forth to look at the world” [7, 10]: «Ջորջ Ուիլըրդի ներկայությամբ Ուինգ Բիդըլբոմը, որը քսան տարի շարունակ առեղծված էր եղել քաղաքի համար, ինչ-որ կերպ ազատվեց իր երկչոտությունից ու ցնորական «ես»-ից, սուզված կասկածի ծովում՝ դուրս ելավ աշխարհին ակն ածելու» [4, 2], [5, 49]: Այստեղ երկու մակդիրի գործածումը նպատակ ունի ընդգծելու հերոսի վայրկենական փորձը՝ ազատվելու մռայլ մտքերից: Մեկ այլ դեպքում. “With a kind of wriggle, like a fish returned to the brook by the fisherman, Biddlebaum the silent began to talk, striving to put into words the ideas that had been accumulated by his mind during long years of silence” [7, 10]: «Մի տեսակ գալարումով, ասես թե ձուկ՝ վտակ ետ դարձող ձկնորսի ձեռամբ, Բիդըլբոմը՝ հավերժ լռակյաց, սկսում էր խոսել անդադար՝ ջանալով բառերի վերածել մտքերը, որոնք խռնվել էին ուղեղի մեջ երկար ու ձիգ տարիների իր լռության ընթացքին» [4, 2], [5, 49]: Այստեղ շատ

հմտությամբ է օգտագործված գեղարվեստական համեմատության նմուշօրինակը՝ հերոսի ձեռքերի շարժումը համեմատելով ձկան գալարումի հետ: Իսկ հետևյալում. “Wing Biddlebaum talked much with his hands. The slender expressive fingers, forever active, forever striving to conceal themselves in his pockets or behind his back, came forth and became the piston rods of his machinery of expression” [7, 10-11]: «Ուինգ Բիդըլբոմը շատ էր խոսում ձեռքերի օգնությամբ: Նուրբ, արտահայտիչ մատները՝ մեկընդմիշ գործուն, մեկընդմիշտ ջանալով թաքնվել ծերուկի գրպաններում կամ էլ մեջքին, դուրս ելան և ասես մխոցի ձողերը դարձան նրա արտաբերած խրթին խոսքերի» [4, 2], [5, 49]: Այստեղ միաժամանակ իրար են լրացնում փոխաբերությունն ու մակդիրը՝ որպես վառ արտահայտություն գրողի գեղագիտական անխախտ ճաշակի: Անդերսոնը, հիրավի, խոսքի գեղագետ-վարպետ է: Դրա վկայությունը այն հաճախադեպ պատկերավորումն է, որով հեղինակի գործերը, սեփական փիլիսոփայական թանզիֆի միջով անցնելով, դառնում են անկրկնելի գոհարներ՝ մարդու հանդեպ ունեցած կարեկցանքի, հանդուժողականության, ինչո՞ւ չէ, նաև սիրո վառ առկայությամբ: Նրա ներկապնակը անդուլ է՝ լի ճշմարիտ կերպար-պատկերներով, մարդկային հոգու խորությունը թափանցելու իր ազնիվ մղումներով: Այս պատումի մեջ գրողը իրեն հատուկ վարպետությամբ կարողանում է մասնավոր կերպարը ընդհանրացնել՝ ռեալիստական խիստ, բայց նաև երբեմն ռոմանտիկ մեղմ գույներով պատկերելով իր ժամանակի անձուկ միջավայրում ապրող հոգիների անլուր տառապանքն ու անօգ վիճակը: Ուինգ Բիդըլբոմի ձեռքերը միանգամայն խորհրդանշան են, ինչպես նաև անունը՝ «թռչնի թև»: Ի թիվս այլ նմանատիպ խորհրդանիշների՝ ձեռքերը խոսուն արտահայտչականությամբ են օժտված, նույնիսկ դրանք շարժուն աշխուժությամբ խոսում են Բիդըլբոմի հոգեկան ապրումների մասին, և նրա պատմությունն էլ սեփական ձեռքերի պատմությունն է. “The story of Wing Biddlebaum is a story of hands. Their restless activity, like unto the beating of the wings of an imprisoned bird, had given him his name” [7, 11]: «Ուինգ Բիդըլբոմի պատմությունը պատմություն է նրա ձեռքերի մասին: Դրանց անխոնջ շարժումը, նման լինելով բանտ-

ված թռչնի թևերի թափահարումի, այդ անունն էր կպցրել նրան» [4, 2], [5, 49]: Այստեղ մակդիրն ու գեղարվեստական համեմատությունը համերաշխորեն շաղկապված են իրար: Հետևյալ դեպքում փոխաբերություն պատկերավորման միջոցը կրկին ընդգծում է հերոսի տագնապները՝ ձեռքերի հետ կապված. դրանք են դարձել իր անուրախ կյանքի հիմնական պատճառը. “The hands alarmed the owner” [7, 11]: «Այդ նույն ձեռքերն էին վախ պատճառում դրանց տիրոջը» [4, 2], [5, 49]: Միայնակ մարդու նուրբ ձեռքերը վեր են ածվել հաղորդակցման, ինքնախոսության, նաև ինքնաղատափետման շարժուն միջոցի, և դրա համար հեղինակին պետք են եղել գործածել այնպիսի հնարքներ, որոնցով ասելիքը հնարավորինս իմաստալից և պատկերային կդառնա: Տագնապների մեջ խճճված հերոսը փորձում է թաքցնել ձեռքերը՝ ի հակակշիռ իր հետ դաշտում վարող մարդկանց կոպիտ ձեռքերի: Այստեղ ձեռքերը կրկին փոխաբերական իմաստով են ներկայանում. “He wanted to keep them hidden away and looked with amazement at the quiet inexpressive hands of other men who worked beside him in the fields, or passed, driving sleepy teams on country roads” [7, 11]: «Նա ուզում էր դրանք թաքցնել հնարավորինս հեռու և ապշանքով էր ակն ածում այն մարդկանց հանդարտ, անարտահայտիչ ձեռքերին, ովքեր դաշտում բանում էին իր կողքին կամ անցնում կողքով՝ քնատ ձիերին քշելով գյուղական ճամփեքին» [4, 2], [5, 49]: Անդերսոնը գեղարվեստական պատկերների միջոցով միաժամանակ ընդգծում է հերոսի ձեռքերի աշխույժ ընթացքը, որը առատություն է արարում՝ ի հեճուկս շրջապատի ծաղրալից անտարբերության: Հետևյալ օրինակում հեղինակը օգտագործում է ոճական կրկնություն. “Winesburg was proud of the hands of Wing Biddlebaum in the same spirit in which it was proud of Banker White’s new stone house and Wesley Moyer’s bay stallion, Tony Tip, that had won the two-fifteen trot at the fall races in Cleveland” [7, 11-12]): «Ուայնսբըրգը հպարտանալ սկսեց Ուինգ Բիդըլբոմի ձեռքերով այն նույն կերպ, ինչպես որ հպարտանում էր բանկիր Ուայթի նորաշեն քարե տնով և կամ թե Թոնի Թիփով՝ Ուեսլի Մոյըրի հովատակով, որ հաղթել էր Քլիվլընդի աշնանային ձիարշավում՝ մեկ մղոն տարա-

ծությունը երկու րոպե տասնհինգ վայրկյանում անցնելու համար» [4, 2], [5, 49]: Այստեղ որոշակի չափաբաժնով նուրբ երգիծանք է նաև զգացվում հերոսի ձեռքերով և ինչով ասես հպարտանալու ուայնսբուրգցիների ցանկության մեջ: Հեղինակային խոսքին բնորոշ պատկեր-հավելումները խոսուն վկայություն են Անդերսոնի պատկերային մտածողության ու գեղագիտական նուրբ ճաշակի:

Հոդվածի պարտադիր տարածքի սղության պատճառով հնարավորություն չունենք շարունակելու պատումում առկա բոլոր ոճական հնարների նկարագրական վերլուծությունը, ուստի սահմանափակվում ենք այսքանով:

«Թենդի» ստեղծագործության քննությունը

Մենք առանձնակի ուշադրություն չենք դարձրել այս և նախորդ գործերի սյուժեի վրա, քանզի մեր խնդրո առարկան լեզվաոճական հետաքրքրվածությունն է: Պարզապես պիտի հավելել, որ այս պատումի հիմքում ընկած է հավատի ու սիրո ձուլման գաղափարը: Այս գործը ևս հատկանշական է լեզվական հնարների հուզական և գեղագիտական գործունությամբ: Այստեղ փոխաբերությանը զուգահեռ ապրում են բաղաձայնույթն ու տարբեր կրկնությունները, զեղչումը, երգիծանքը, մակդիրը, որոնք միանգամայն տեսանելի են դարձնում Անդերսոնի ուրույն ձեռագիրը՝ լի անակնկալներով և հուզահոգեբանական ուշագրավ անցումներով: Պատմվածքը լարված հարաբերությունների մի դրվագ է ներկայացնում, որում կիզակետային է այն պահը, երբ հերոսներից մեկը աղջնակին անվերջ հորդորում է «թենդի» լինել և փորձում հավատ ու սեր ներշնչել ապագայի հանդեպ: Այսպես. “Until she was seven years old she lived in an old unpainted house on an unused road that led off Trunion Pike” [7, 138]: «Մինչ յոթ տարեկան դառնալը նա ապրում էր լքված ճամփի վրայի մի հին չներկված տան մեջ, որ ծայր էր առնում Թրանյըն Փայքից» [3, 2]: Այստեղ, փոխաբերության գործածմանը զուգահեռ, հեղինակը ներկայացնում է պստիկ հերոսուհու կացավայրի անմխիթար վիճակը: Հետևյալ նախադասության մեջ բաղաձայնույթը ինքնանպատակ չէ. այն կերպարի հուզականությունը շեշտադրելու միտում ունի. “His body shook and when he tried to talk his voice trembled” [7, 139]: «Նրա ողջ մարմինը դողում

էր, իսկ երբ փորձեց խոսել՝ ձայնը կերկերաց» [3, 2]: Եվ կրկին հեղինակի նախընտրած ոճերից մեկը՝ կրկնություն, մարդու հոգու խռովքը ընդգծելու համար. “I ran away to the country to be cured, but I am not cured. There is a reason” [7, 139]: «Ես փախա գյուղ, որ բուժվեմ, բայց չեմ բուժված: Դրա համար պատճառ կա» [3, 2]:

Փոխաբերության ուշագրավ օրինակ կա հետևյալ դեպքում, որում հեղինակը պատկերում է կերպարի տագնապած, լարված վիճակը. “The shoulders of the stranger shook violently, and when he tried to roll a cigarette the paper fell from his trembling fingers” [7, 140]: «Օտարականի ուսերն ուժգին ցնցվեցին, ու երբ փորձեց ծխախոտ փաթաթել, թուղթն ընկավ դողացող մատներից» [3, 2]:

Հաջորդ կառույցի մեջ առկա է զեղչում՝ որպես միտումնավոր բացթողում՝ շեշտելու կերպարի խռովքը. ահա. “His body rocked back and forth and he seemed about to fall, but instead he dropped to his knees on the sidewalk and raised the hands of the little girl to his drunken lips” [7, 141: «Նրա մարմինը մի կողմից մյուսն էր ճոճվում և ասես ուր որ է կընկներ, բայց փոխարենը ծնկեց մայթին ու պստլիկ աղջկա թաթիկները մոտեցրեց գինովցած շուրթերին» [3, 2]: Հերթական մակդիրը գալիս է հավաստելու, որ կերպարը ընկղմված է իր խառնափնթոր մտքերի մեջ. “As he went along in the darkness under the trees he forgot the babbling voice of the stranger and his mind returned to the making of arguments by which he might destroy man’s faith in God” [7, 141]: «Մութի մեջ ծառերի տակով անցնելիս Թոմը մոռացավ օտարականի հարբած բարբաջանքն ու կրկին դարձավ այն մտքին, թե ինչ անառարկելի փաստարկ գտնի՝ ոչնչացնելու մարդ-արարածի հավատն առ Աստված» [3, 2]: Դիտարկման մեջ մեզ կրկին հետաքրքրում է պատկերաստեղծ մակդիր-փոխաբերություն համակցությունը՝ որպես հուզաթաթավ վիճակի ճշտիվ պատկերման ապացույց: Ահա. “With childish abandon she gave herself over to grief, her voice breaking the evening stillness of the street” [7, 141]: «Մանկան անկաշկանդվածությամբ նա լիովին հանձնվեց վշտին, ու ձայնը նրա խախտեց փողոցի երեկոյան անդորրը» [3, 2]: Եվ վերջապես, ասելիքի գագաթնակետը՝ աղջնակի պոռթկում- բողոք-ցանկությունը՝ պատկերված ոճական

կրկնությամբ. “I want to be Tandy. I want to be Tandy. I want to be Tandy Hard” [7, 141-142]: «Ուզում եմ Թենդի լինել: Ես ուզում եմ Թենդի լինել: Ուզում եմ Թենդի Հարդ լինել» [3, 2]:

Մանրազնին դիտարկելով այս ամենը երկու լեզուների առկայությամբ, հիմնական շեշտադրում անելով պատկերավորման հնարների հուզագեղագիտական առկայությանը՝ փորձեցինք նաև պարզել մեծ գրողի տագնապները, մտածումները, գավառական աննշան քաղաքի մարդկանց հանդեպ նրա ունեցած խոր մարդասիրությունը, որ տածում է նա իր նմանների, հոգեպես լքյալների հանդեպ: Եվ պատահական չէ, որ նրա գրական պատումներում հույզերը և հոգեբանավերլուծական մոտեցումները իրեն խորթ չեն բնավ: Նա իր խոհերն ու տագնապները իրապաշտորեն ներարկում է իր հրաշալի կարճ պատմվածքների ակոսներին: Նաև բնավ պատահական չէ, որ մեր խնդրո առարկան դրեցինք հեղինակի գործերում ոճերի քննության մեջ, քանզի ցանկացած նման մոտեցում հարստացնում է ուսումնասիրողի լեզվական, մշակութային, ինչո՞ւ չէ, նաև ճանաչողական պատկերացումները:

Ամերիկյան գրականության խոշորագույն ներկայացուցիչ Շերվուդ Անդերսոնի վեպերը և կարճ պատմվածքները աչքի են ընկնում կուռ կառուցվածքայնությամբ, լեզվական անպաճույճ, բայց և խոր լուծումներով, ուշագրավ արտահայտչաձևերով, նաև ուրույն գեղագիտությամբ: Նրա «Ուայնսբըրգ, Օհայո» պատմվածաշարը ռեալիստական գույներով ներկայացնում է գավառական աննշան քաղաքի անձուկ կյանքը՝ լի հոգսերով ու տառապանքով: Նրա կերտած կերպարները տևական մեկուսացման և խորթացման մեջ են, փորձում հեռանալ ինչ-որ մի տեղ, ուր հնարավոր լինի ապրել իրենց երազանքներով ու երջանկությամբ: Անդերսոնի գրողական ձեռագրի մասին խոսելիս պետք է կարևորել նրա յուրատիպ մոտեցումը բառի պատկերավորմանը, մի բան, որ հստակ երևում է մեր դիտարկած «Ձեռքերը», և «Թենդի» պատմվածքներում: Այս պատումներում արտահայտչական միջոցները լիարժեք պատկերացում են տալիս Անդերսոն հեղինակի գրական բարձր ճաշակի մասին, քանի որ նրա ոճը՝ պարզ, հուզականությամբ լի, միաժամանակ անսեթևեթ գիր է, որ կա: Կարելի է վստահաբար

ասել, որ նա՝ որպես ժանրի նորարար, առավելապես քնարական բանաստեղծ է արձակի մեջ, քան թե պարզապես պատմող: Նրա գործերում, ոճական ինքնատիպ հնարքներին զուգահեռ, գործուն ներկայություն ունեն նաև խորհրդանիշները, ինչպես «ձեռքերը» և «թենդին» համանուն պատումների մեջ: Շերվուդ Անդերսոնի գրականությունը մի տեսակ խառնուրդ է ռոմանտիզմի և գեղագիտական զգայունության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Անդերսոն Շ., Թենդի (թարգմ.՝ Ն. Ա. Ջաղինյանի) // «Երկունք», թիվ 1 (120), 2012:
2. Անդերսոն Շ., Ձեռքերը (թարգմ.՝ Ն. Ա. Ջաղինյանի) // «Երկունք», թիվ 10 (141), 2013:
3. Անդերսոն Շ., Ձեռքերը (թարգմ.՝ Ն. Ա. Ջաղինյանի) // «Անդին», թիվ 9 (22), 2014:
4. Anderson Sh., Early Writings: White Ray Lewis: Kent State Univ. Pr., 1989.
5. Anderson Sh., Winesburg, Ohio, A Signet Classic, Printing in the USA, 1993.
6. Gaines E., Notable American Novelists, Revised Edition, Volume 1, James Age, Edited by Carl Rollyson, Salem Press, Inc. 2008.
7. Morris A. R., Winesburg, Ohio, (Cliff Notes), 1988.
8. Schevill J., Sherwood Anderson: His life and work. Denver, CO: University of Denver Press, 1951.

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ КОРОТКИХ РАССКАЗОВ ШЕРВУДА АНДЕРСОНА

Нина Джагинян

Резюме

Ключевые слова: *короткий рассказ, литературный прием, ясность, непосредственность, изолированность, отчуждение, выразительные средства, символы*

В данной статье представлен ряд наблюдений над литературным стилем Шервуда Андерсона. Ш. Андерсон – один из величайших американских прозаиков 20 века. Его реалистические произведения обладают психологической сложностью и отличаются своеобразным индивидуальным стилем. Его короткие рассказы акцентируют внимание на образе и настроении, а также на изолированности и отчуждении персонажей. Его литературный стиль лаконичен и опирается на повседневную разговорную речь. Стиль Ш. Андерсона выделяется также своей ясностью и непосредственностью. Он использует конкретные образы и краткие, сжатые диалоги, которые способствуют лучшему взаимопониманию между писателем и читателем. В произведениях Ш. Андерсона содержатся натуралистические черты, хотя он сам не был носителем этих идей. Собственный опыт придает рассказам дополнительную реалистичность и достоверность. Одним из наиболее известных произведений Ш. Андерсона является «Уайнсбург, Огайо» – сборник коротких рассказов, в которых описывается жизнь людей в вымышленном провинциальном городе. Нами проанализированы два коротких рассказа из этого сборника – «Руки» и «Тэнди». Его персонажи почти всегда одиноки и, как правило, не имеют никакого отношения к другим жителям Уайнсбурга. Эти рассказы содержат ряд интересных лингвостилистических средств, а также символов, которые описывают внутренний мир литературных героев, их эмоции и переживания. Идиостиль Ш. Андерсона оказал заметное влияние на творчество видных представителей современной американской литературы, его последователей, и прежде всего на Эрнеста Хемингуэя и Уильяма Фолкнера.

LINGUO-STYLISTIC ANALYSIS OF SHERWOOD ANDERSON'S SHORT STORIES

Nina Jaghinyan

Summary

Key words: *short story, literary technique, simplicity, directness, isolation, alienation, expressive means, symbols*

The article touches upon some observations on Sherwood Anderson's writing style. Anderson is one of the greatest American prose writers of the 20th century. His realistic works are graced by a psychological complexity and original individual style. His short stories stress character and mood as well as isolation and alienation from society. His writing style is laconic and colloquial based on everyday speech. Anderson's style is also noted for its simplicity and directness. He uses concrete images and terse, compressed dialogues which lead to a better communication between writer and reader. Anderson's writings contain a naturalistic perspective, though he himself doesn't hold such views. His own experiences add a sense of realness and authenticity to the stories. Anderson is best known for his work "Winesburg Ohio", a collection of short stories that explores the lives of people in a fictional rural town. We have analyzed the short stories "Hands" and "Tandy" taken from that collection. His characters are almost always lonely and have no connection with the people of Winesburg, as a rule. His writing involves the usage of a number of remarkable stylistic devices as well as symbols that describe the characters' inner world, their emotions and concerns. Anderson's writing style had a marked influence on some prominent representatives of American modern literature who followed him, most notably Ernest Hemingway and William Faulkner.

ՀՏԴ 811.19

«ՍԱՀԵԼ», «ՍՈՒԶՎԵԼ» ԵՎ ԱՅԼ ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Զաքարյան

Հանգուցային բառեր. *հայոց լեզու, հնդեվրոպական նախալեզու, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ձայնդարձ, ածանց, սահող s, փոխառություն*

Ներածություն

Հոդվածը նվիրված է հ.-ե. *sk'ei- «ցայտել; ցատկել» պարզական արմատից անմիջականորեն սերված հայերեն մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը, որոնք ունեն «սահել», «սուզվել», «ցնցվել», «սուրալ» և հարակից իմաստներ: Այդպիսի բառերից մի քանիսը ստուգաբանված են (տե՛ս ստորև) և տեղ են գտել գիտական աղբյուրներում: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռևս կան նույնարմատ չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված բառեր: Դրանց հայտնաբերումն ու ստուգաբանությունը կամ վերջինիս ճշգրտումը կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով:

Հայերենում «սահել», «սուզվել», «ցնցվել» իմաստներով կան մի շարք հոմանիշ բառեր (**սայթաքել – սոթ տալ – ցըլ տալ – սահել – սղղալ – սողալ, շօշափել – շոյել – շփել, սուզվել – սկել, ցնծալ – ցնցել** և այլն), որոնց արմատները նաև հնչյունապես աղերսվում են միմյանց՝ տարբերվելով ածանցներով, աճականներով, ձայնդարձի աստիճաններով, բաղաձայնական օրինաչափ հերթագայություններով, շեշտափոխական և փոխազդեցական հնչյունափոխություններով, սակայն մինչ այժմ առկա բառարաններում ու գիտական գրքերում բխեցվել են հաճախ միանգամայն տարբեր ու տարասեռ աղբյուրներից: Սույն հոդվածի խնդիրներից են հոմանիշային շարքեր կազմող այդ բառերի միջև ծագումնաբանական համակարգային կապեր հայտնաբերելը և հ.-ե. նույնական սկզբնաձևերից բխեցնելը:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. *sk'ei- «ցայտել; ցատկել» պարզական արմատը գիտական աղբյուրներում ներկայացված է տարբերակներով՝ № 1721, (s)kek-, skeg- «ցատկել, արագ շարժվել», № 1727, (s)kĕl- «ցատկել», № 1728, skhel- «սայթաքել», № 1736, (s)ker-2, skerə-: skrē- «ցատկել, շրջվել», № 1745, skēt-: skət- «ցատկել» [15], *skand- «վազել, ցատկել, բխել», *skat- «ցատկել, ցայտել, ժայթքել», *(s)ker- «ցատկել, վազել», *(s)krey- «շարժել, ցնցել, շուրջը թռչել», *(s)kerəd- «ցատկել, կայթել, պարել», *sk'el- «ցատկել, ծուլ լինել», *(s)kreit- «դող, տենդ, ցնցում», *(s)k^{w}at-, *(s)kaut- «ցնցել», *skūbh- «հրել, քշել, շարժել», *sk^{w}alb- / *sk^{w}elb- «լվալ, ողողել, ցայել» [13], *sk´ē-r- «ցատկել» [4, IV, 456-457], [9, 743, ցիր], [1, 125], *sk´əlēq- «թաց; ցողել; ցայտել» [3, 152], *skhē-t- <*skeht- «ցատկել, ցայտել» [14, 207], [16, շիթ], *sk´ə-t- «ցատկել, ցայտել» [12, 623-624, ցայտ] և այլն: Այս բոլորն ընդհանրացնող բնիմաստն է՝ «շարժվել, ընթանալ»:

Նշված աղբյուրներում առկա են այդ արմատից առաջացած հայերեն մի շարք բառեր. **սխալ (սղալ, զղալ, զաղալ)** «թյուրություն, պակասություն, հանցանք» (որից՝ **սխալվել** «վրիպել, խոտորել, գայթել») <*skhal-՝ *skhel- «սայթաքել, սխալվել» [15, № 1728], [4, IV, 224-225], [9, 682][4], **շուփ-** «իրար քսել, տրորել»[5] (որից՝ **շփել** «1. մերսել, մաժել, տրորել, 2. քսել, շոշափել, 3. շոյել, փաղաքշել, 4. ցողել, լցնել (հեղուկը), ջրել, 5. տեղալ, 6. շահել», **շփվել** «հաղորդակցվել, հարաբերվել») <*skhupt-՝ *skeup- «շոշափել, շփել»[6] [9, 595], **ցիր** «սփռված, ցրիվ» <*sk´ē-r- [4, IV, 456-457], [9, 743], [10, 148], [1, 125], **ցատկել** «ոստնել» <*sk´ə-t-կ- [4, IV, 633], [1, 123-129], **ցայտ (ցաթ, ցեթ)** «ցալքուն, շիթ, կաթիլ» <*sk´ə-t- [4, IV, 449], [9, 741], [12,

[4] Թերևս ավելի հարմար կլիներ առաջարկել **աղալ** <***սուղ-ալ** <*(s)k´ō-l- <*sk´ei- «ցատկել, վազել» բանաձևը (-**ալ** ածանցի համար հմմտ. *տապ-ալ-ել, թավ-ալ-ել, ծավ-ալ, տարգ-ալ* [5, III, 66] ևն): Մյուս՝ **սխալ, զղալ, զաղալ** ձևերը առնմանության հետևանք են և կամ ձայնդարձային տարբերակներ:


[5] Հ. Աճառյանն այս արմատը չի ստուգաբանել [4, III, 540]:

[6] Հ.-ե.այս արմատի ածանցյալ է նաև ռուս. шупать բառը [9, 595]:

623-624], **շիռ** «լի, առատ» (որից՝ **արբշիռ, շռայլ**) <*skhē-r-s- [9, 588], **շոշոկել** «ջանալ գեղեցիկ երևալու, պչրվել, նազկտալ» <*շոկ- <*skho-g-՝ կրկնությամբ [9, 592], **սէգ** «վեհ, հպարտ» <*(s)k´ei-gh- [4, IV, 207-208], [16] ևն։

2020 թ. լույս տեսած մեր մի հոդվածում առաջարկել ենք այս շարքին հավելել մի խումբ բառեր, որոնց թվում են հետևյալները. **կայթ** «ցատկոտոց, ցնծության պար» <*(s)kəi-t-, **կայտ** «1. առույգություն, եռանդ, 2. ուրախություն, 3. ցատկոտուք» (որից՝ **կայտառ, կայտիռ, կայտռել**) <*(s)kəi-d-, **խայտալ** «1. ցատկոտել, թռչկոտել, կայտռել, ոստոստել, տրտինգ տալ, 2. ցնծալ, հրճվել, ուրախանալ» <*(s)khəi-d-, **խրախ** «1. ուրախ, զվարթ, կայտառ, 2. ուրախություն, խնջույք» <*խուր-ախ <*(s)khō-r-, **ցնծալ** «հրճվել, խայտալ» <*ցունծ- <*sk´ō-n-g´-, **ճայթել** «1. պայթել, 2. ճաքել, ճեղքվել, կոտրվել, 3. շաչել, 4. կայթել, խաղալ, 5. ցնծալ, 6. ցատկտել, թռչկոտել» <*sk´həi-t-, **զուարթ** «1. կենսուրախ, բերկրալի, 2. խնդումերես, 3. ժիր, աշխույժ, կայտառ, 4. զգաստ, արթուն, առույգ» <*(s)kʷhuə-r-թ-, **զուարճ** «1. ուրախ, ցնծալի, 2. ծիծաղաշարժ» <*(s)kʷhuə-r-ճ-, **ժայթքել** «1. ուժգին դուրս մղել, արտավիժել, 2. թափով բխել, 3. փսխել, 4. պոռթկալ» <*skʷhəi-t-ք-, **քայլ** <*(s)kəi-l-, **ծուլ լինել** «թռչկոտել, վեր ցատկել» <*(s)k´hō-l- ևն [6]։

Իմաստային այս առերևույթ բազմազանության մեջ օրինաչափություններ գտնելու և իմաստային անցումները համակարգված ներկայացնելու նպատակով կազմել ենք գծապատկեր՝ իմաստային զարգացման շրջված ծառի տեսքով (տե´ս ստորև)։ Այս իմաստները դուրս են բերված վերոհիշյալ աղբյուրներից։ Իմաստային անցումները մերթ արմատային տարբերակների ու դրանց ածանցյալների միջև են (միջբառային անցումներ), մերթ առանձին բառերի տարբեր իմաստների միջև (ներբառային անցումներ)։ Սա անցումների ամբողջ գունապնակը չէ։ Բազմաթիվ ավելի մասնավոր անցումներ անտեսված են՝ գծապատկերը չխճողելու համար։



Գծագիր: ***Իմաստային զարգացումների «ծառ»***

Այս արմատից կարելի է բխեցնել նաև հայ. «սահել», «սուզվել», «ցնցվել» և հարակից այլ իմաստներով հետևյալ բառերը. **սայթաքել, սոթ տալ, սահել, սահնակ, սղղալ, ցըլ տալ, սողալ, սպրդել, սղալել, շօշափել, շոյել, քսել, փաղաքուշ, սոյր, սուրհանդակ, սուրհապ, սոյզ, սկել, ցունց, ճօճ, ճեմել, շոհանալ**[7]: Հ.-ե. արմատի՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով, տարբեր աճականներով ու ածանցներով բաղադրված տարբերակներից սերված այս բառերի ստուգաբանությունները կատարված են հայերեն և այլալեզու նույնարմատ զուգահեռների հնչյունական, բառակազմական, իմաստային վերլուծությունների հիման վրա: Հաշվի են առնված նաև հայերեն նյութի բարբառային տարբերակները:

Այդ բառերի ստուգաբանությունը կամ վերաստուգաբանությունն էլ սույն հոդվածի հիմնական նորույթն է: Անդրադառնանք այդ բառերին հերթականությամբ:

[7] Հ.-ե. այս արմատի այլալեզու ածանցյալները նույնպես իմաստային բազմաթիվ ճյուղավորումներ ունեն, որոնք ստորև կներկայացվեն հայերեն տարբեր բառերի ստուգաբանության կապակցությամբ:

1. «Սահել» իմաստով բառեր

Սայթաքել «ոտքը սահել, գայթել, սոթ տալ, պլստալ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 169], [9, 666]: Սակայն Գ. Ջահուկյանը կասկածով հնարավոր է համարել *սայթ-աք* կազմություն՝ **աք**-ը ենթադրելով «ոտք» իմաստով արմատը (նույն տեղում): Հ. Աճառյանը մեկ այլ առիթով **աք**-ը համարել է ածանց՝ «մասնիկ» [5, 67], որ ավելի համոզիչ է: Նկատի ունենալով, որ սայթաքելը, սահելը շարժման, ընթացքի տարատեսակներ են (ինչպես և ցատկելը, թռչելը, լողալը, վարգելը, վազելը, քայլելը, սողալը, մագլցելը, սուզվելը և այլն), նաև արտաքին նմանությունը *ցայտ, ժայթ, կայթ, կայտ, խայտ-* արմատների հետ, կարելի է առաջարկել **սայթ-** <*(s)k´əi-t- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը (**-աք** ածանցի համար տե՛ս [9, 802])[8]:

Սոթ (սօթ, սութ) «սայթաքում» (որից՝ **սոթ տալ** «սայթաքել, գայթել, պլստալ, սահել, սղոցել», **սոթլիկ** «1. սայթաքուն, պլստան, 2. լպրծուն, 3. ողորկ, հարթ, կոկ(լիկ)», **սոթտվան** «սոթլիկ, պլստան, սահուն», **սոթին** «թեք, զառիվայր, զառիկող») բառը [8, IV, 238], [7, V, 372-373] ստուգաբանական բառարաններում բացակայում է: Սա փաստորեն **սայթ-** արմատի հոմանիշն է, հետևաբար կարելի է դիտարկել որպես նրա ձայնդարձային տարբերակ՝ **սոթ** <*(s)k´o-t- <*sk´ei- «ցատկել, վազել»: Անշուշտ, սրա կրկնավորն է **սոթոթ (սութութ) անել (տալ)** «1. թեքության վրա սահեցնելով ցած գցել, 2. հետույքի վրա սողալով շարժվել, 3. սահել գնալ (կաքավի մասին)» բառը [8, IV, 238], [7, V, 373]՝ *սոթ-սոթ > սոթոթ:*

Սահել «1. սղոցել, սայթաքել, սոթ տալ, գայթել, պլստալ, լպրծել, 2. թեթև կերպով շարժվել՝ ընթանալ, 3. տատանվել, տարու-

[8] Այլալեզու նույնարմատ զուգահեռներից են՝ հ.հնդկ. skhal, skhalatē «սխալվել, երերալ, տատանվել, դողդոջել, թերանալ, սայթաքել, կաղալ, մոլորվել», skhalita- «1. դողդոջուն, վարանոտ, երերուն, 2. սխալ, թերի, պակասավոր, 3. ապշած մոլորված», հուն. σφάλλω «սահեցնել, սխալեցնել, խաբել», σφάλλομοι «սահել, սայթաքել, ընկնել, սխալվել, թերանալ», σφάλμα «սխալ, վրիպակ, թերություն, արկած, աղետ» [4, IV, 224, սխալ], [15, № 1728]: Հմմտ. նաև անգլ. skate «սահել, չմշկել, չմուշկ», ռուս. кататься «սահել, զբոսնել, ման գալ»:

բերվել, 4. ծփալ, երերալ, 5. հոսել, 6. սողալ, սողոսկել» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 161-162], [9, 664]: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք կապել նույն հ.-ե. արմատի հետ, ինչ **սայթ** և **սոթ** արմատները, միայն թե այլ աճականով՝ **սահ-** <*(s)kʹə-gʷh- <*skʹei- «ցատկել, վազել»[9]:

Սահնակ «ձյան կամ սառույցի վրա սահելով ընթացող փոխադրամիջոց, սղոան, խզակ, բալխիր» բառը Հ. Աճառյանը համարել է հայերենում վերաստուգաբանված փոխառություն չաղաթայերեն sanaq հոմանիշից [4, IV, 162][10]: Համոզիչ չի թվում: Հայաստանը լեռնոտ ու ձյունառատ երկիր է, և անհավանական է, որ սահնակին ծանոթանար ուշ միջնադարի միջինասիական թյուրքական գրական-գրքային լեզվի միջոցով: Մանավանդ որ **սահնակ** բառը հայերենում ունի թափանցիկ կառուցվածք՝ **սահ-ուն-ակ* կամ *սահ-նակ* (**-նակ** ածանցի համար հմմտ. *աղջ-նակ, փոխ-նակ, կոչ-նակ, սկս-նակ, խոս-նակ, խոտոր-նակ, սող-նակ* ևն) [11, 309]:

Սղղալ «սահել, սայթաքել, սոթ տալ, գայթել, պլստալ» (որից՝ **սղղան** «սահնակ») բառը [8, IV, 232], [7, V, 365] ստուգաբանական բառարաններում բացակայում է: Սրա ***սուղ-** արմատը (**ղ**-ի սաստկական կրկնությամբ), իմաստից ելնելով, առաջարկում ենք կապել նույն հ.-ե. արմատի հետ, ինչ **սայթ, սոթ** և **սահ-** արմատները, միայն թե այլ աճականով՝ ***սուղ-** <*(s)kʹō-l- <*skʹei- «ցատկել, վազել»: Սրանից են **սղլիկ** «սահուն, սոթլիկ, պլստան», գուցե նաև **սղին (սղոն)** «1. ջրի երեսին բռնած բարակ սառույց, 2. հալվող սառույցի մեծ կտորներ, որ գետը տանում է» [7, V, 364] բառերը[11]:

Ցղլ տալ «սոթ տալ, սայթաքել, սահել» [7, VI, 271] բառը ստուգաբանական բառարաններում բացակայում է: Իմաստից ելնելով՝

---

[9] Հ.-ե. *gʷh > **հ** համապատասխանության համար հմմտ. **դեհ** <*dheg*ʷ*h- «այրել» [9, 192, դեհ 2]:

[10] Գ. Ջահուկյանն այս բառին չի անդրադարձել: Իսկ Ս. Մալխասյանցը կասկածելի է համարել Հ. Աճառյանի կարծիքը [8, IV, 176]:

[11] Հմմտ. ռուս. скользить < նախասլավ. *kъlz- «սահել, սայթաքել, սղղալ» [17]:

առաջարկում ենք կապել վերոհիշյալ **սայթ, սոթ, սահ-** և **սղղալ** բառերի նախաձևի հետ՝ **ցըլ** <*ցալ <*sk´ə-l- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանական բանաձևով (բարբառային **ա**<**ը** անցման համար հմմտ. **սառ**<**սըռ, քար**<**քըռ, քռայ** ևն)։

Սողալ (բրբռ. **ցուղիլ**) «մարմնով սահելով շարժվել՝ ընթանալ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են հավաստի ստուգաբանություն չունեցող [4, IV, 240-241], [9, 686]։ Իմաստից և ձևից ելնելով՝ հարկ է ենթադրել, որ սրա **սող-** արմատը **սղղալ** բառի **սուղ-** արմատի ձայնդարձային տարբերակն է՝ **սող-** <*(s)k´o-l- <*sk´ei- «ցատկել, վազել»։ Այս արմատի ընդլայնված տարբերակներ են՝ **սողմ-, սողկ-, սողոսկ-, սողուսկ, սողոպ-** [5, III, 67], [4, IV, 240-241], [8, IV, 240]։ Իմաստային անցման համար հմմտ. վերոհիշյալ **սահել** բառի «1. սայթաքել, 2. ընթանալ, 3. տարուբերվել, երերալ, 4. սողալ» իմաստները։

Սպրդել (սպրծել) «1. սողոսկել, խցկվել, 2. վրիպել, սխալվել, 3. դուրս պրծնել, ձեռքից սահել՝ փախչել» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 267], [9, 693]։ Իմաստից ելնելով՝ կարելի է կապել վերոհիշյալ **սխալ** և **սողալ** բառերի նախաձևերի հետ՝ ենթադրելով ***սուպ-ր-դ/ծ <***(s)k´ō-b- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *b-ն, **ր**-ն և **դ/ծ**-ն ածականներ են։

Սղալել «1. հարդարել, կոկել, հարթել, ուղղել, շտկել, 2. շոյել, շփել, քսել, փաղաքշել, 3. փաղաքուշ խոսքեր ասել» բառը [8, IV, 232], [7, V, 364] ստուգաբանական բառարաններում բացակայում է։ Սա իմաստով մոտիկ է «սահել» նշանակող բառերին և ձևով նման է **սղղալ** բառին, ուստի կարծում ենք, որ ածանցավոր բառ է՝ ***սուղ-ալ-ել**, որի արմատը նույնական է **սղղալ** բառի արմատին (**-ալ/-ել/-իլ** ածանցի համար հմմտ. *տապ-ալ-ել, թավ-ալ-ել, ծավ-ալ, տարգ-ալ, այց-ել-ել, արգ-ել-ել, վայ-ել-ել, տես-իլ, կաթ-իլ* ևն)։

Շաւշափել (շօշափել) «1. ձեռքը քսելով զգալ, 2. ձեռք տալ, դիպչել» բառը Հ. Աճառյանը համարել է կրկնավոր **շափ** արմատից, որը նույնացրել է վերոհիշյալ **շուփ**-ի հետ՝ թողնելով առանց ստուգաբանության [4, III, 547]։ Գ. Ջահուկյանը մասամբ համակարծիք է, սակայն չի մեկնաբանել արմատային տարբերակների փոխհա-

բաբերությունը և չի տվել **շափ**-ի նախաձևը [9, 584]: Կարծում ենք՝ այդ նախաձևը պետք է լինի *skhə(u)-p- «շոշափել, շփել» <*sk´ei- «ցատկել, վազել»:

Շոյել «ձեռքով մեղմ շփել, փաղաքշել, փայփայել, ձեռքը քսել» [8, III, 531] բառը ստուգաբանական բառարաններում բացակայում է: Սա իմաստով մոտիկ է «սահել» նշանակող բառերին, գրեթե հոմանիշ է **սղալել, շփել, շօշափել** բառերին: Ուստի կարելի է ենթադրել **շոյ-** <*skhou-/*skheu- «շոշափել, շփել» <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը:

Քսել «շփել, շոշափել, օծել» բառը համարվում է ածանցյալ **քիս** «քսելիք բան, պնակիտի վրա քսվող կավ» արմատից, որի ծագումը համարվում է անհայտ [4, IV, 580], [9, 783]: Իմաստից ելնելով՝ կարելի է ենթադրել ***քիս** <*(s)kō-k´- <*skeu- «շոշափել, շփել» <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը:

Փաղաքուշ «քսու, քսմսվող, քծնող, շողոքորթ, կեղծավոր» (որից՝ **փաղաքշել** «գգվել, փայփայել, շոյել») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 474], [9, 756]: Իմաստից և ձևից ելնելով՝ կարելի է առաջարկել **փաղա-քուշ** <*(s)kō-k´w- <*skeu- «շոշափել, շփել» <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ **քուշ** արմատը վերոհիշյալ **քսել** բառի **քիս** արմատի ձայնդարձային տարբերակն է՝ **u – շ** անցմամբ (հմմտ. *սաստ – շեշտ, սալոր – շլոր, սեպ – շեպ (բրբռ.), սեմ – շեմ, մասիկ – մաշիկ* ևն), **փաղ-/բաղ**-ը նախածանց է՝ «կից, հար, կիպ» իմաստով [4, IV, 472-473], [9, 756]:

2. «Սուրալ» իմաստով բառեր

Սոյր «արագ վազք» (որից՝ **սուր(հ)ալ** «1. սլանալ, 2. փախչել», **զաղտասոյր** «ծածուկ ներս սպրդող») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 242], [9, 687]: Այս արմատի թե՛ իմաստը, թե՛ ձևը թույլ են տալիս առաջարկելու **սոյր** <*(s)k´ou-r-(ti)- <*(s)k´e-r- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *r-ն ածական է, *-ti-ն՝ ածանց[12]: Սրա օգտին են վկա-

[12] Այս *-ti > **հ** ածանցի համար հմմտ. *բահ (բհի, պհի, բիր)* <*բարհ <*bhər-ti- «ծակել, կտրել, փորել» [9, 113]:

յում նաև այլ լեզուներում առկա նույնարմատ զուգաբանություն-ները՝ մ.ս.գերմ. scheren «վազել, շտապել», ս.գերմ. scheren «գնալ, շտապել, վազել», մ.բ.գերմ. schërn «շտապել, հեռանալ», schurz «ցատկ, վազք, ընթացք», լիտվ. skrieti «քայլել, շարժել, ճախրել, շտապել», ռուս. шевелить «շարժել» [13, *(s)ker-, *(s)krey-]:

Սուրհանդակ «թղթատար» բառը Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող [4, IV, 256]: Գ. Ջահուկյանը ենթադրել է «իրանական փոխառություն, բայց բուն աղբյուրը չի հավաստված» [9, 690]: Փաստորեն մերժվել է այդ բառի կապը վերոհիշյալ **սուրհալ** բառի հիմքի հետ, որ ենթադրել են դեռևս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն, Տերվիշյանը, Մառը [4, IV, 256]: Բայց այդպես մտածելու տեղիք է տալիս բառի իմաստային կազմը՝ «սուրալով տեղեկություն տեղափոխող, արագագնաց թղթատար»: Ուստի կարծում ենք, որ պետք է վերահաստատել այդ տեսակետը՝ առաջարկելով **սուրհ-անդ-ակ** ստուգաբանությունը, որտեղ առկա է **–անդ-ակ** բաղադրյալ ածանցը (հմմտ. *այլ-անդակ, օժ-անդակ, ասպ-անդակ, բով-անդակ, կարկ-անդակ, եռ-անդակ* ևն): Առանձին **–անդ** ածանցի համար հմմտ. *եռ-անդ, արգ-անդ, վարս-անդ, կալ-անդ, հիւ-անդ, մարմ-անդ, խախ-անդ* ևն [9, 797]:

Սուրհապ «մի տեսակ քամի» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [4, IV, 256-257]: Գ. Ջահուկյանի բառարանում բացակայում է: Սուրալը քամու հատկանիշ է: Ուստի կարելի է այս բառը կապել վերոհիշյալ **սուրհ-** հիմքի հետ՝ **-ապ** ածանցով (**-ապ/-իպ/-եպ/-ոպ** վերջածանցի համար հմմտ. *կամ-ապ «բուս.», խուճ-ապ, խծ-ապ «վրակար», խծ-իպ «1. եղունգի փուշ, 2. խծապ, 3. ճյուղահյուս ցանկապատ», կճ-իպ «դմակի ծայր», կճ-եպ, կլ-եպ, ծլ-եպ, գլ-եպ, խծ-եպ, կոռ-ոպ «փայտե շինություն սյուների վրա», ճիլ-ոպ* և այլն):

3. «Սուզվել» իմաստով բառեր

Սոյզ «1. ընկղմում, խորացում, 2. որջ, բույն» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 241-242], [9, 687]: Որպես շարժման տարատեսակի անվանում՝ սա ևս փորձել ենք կապել հ.-ե. վերոհիշյալ <*sk´ei- «ցատկել, վազել» արմատի հետ՝ նկատի առնելով հատկապես ձևային նմանությունը **սոյզ-** արմատի

հետ՝ աճականի տարբերությամբ: Ուստի առաջարկում ենք **առյզ-** <*(s)k´ou-g´h- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *g´h-ն աճական է: Իմաստային անցման համար հմմտ. ռուս. **сигать** «1. ցատկել, թռչել, 2. սուզվել, 3. ճողոպրել» [17]:

Սկել «1. սուզվել, ընկղմվել, իջնել ջրի տակ, 2. խրվել, մխրճվել, 3. անհետանալ, չքվել, աչքից կորչել» բառը[13] Հ. Աճառյանը, հետևելով Բենվենիստին, համարել է **սիկ** «տիղմ, ցեխ» բառի ածանցյալ՝ դա էլ համարելով փոխառություն իրան. գվռ. ենթադրյալ *sik «ավազ» ձևից [4, IV, 212]: Գ. Ջահուկյանը փոխառության գաղափարը չի ընդունել, սակայն նոր առաջարկ էլ չի ներկայացրել [9, 649]: Փաստերն ապացուցում են, որ անհավաստի է նաև **սկել** < **սիկ** անցման գաղափարը, և հավանական է **առյզ** < **սկել** կապը: Խնդիրն այն է, որ կա **սուկսուկ** «գլուխը ջուրը մտցնել-հանելը» բառը, որի արմատի հետ էլ Մալխասյանցը կապել է **սկ(վ)ել** «սուզվել» բառը [8, IV, 247], [7, V, 405][14]: Ուստի առաջարկում ենք **սկ-ել** <***սուկ-** <*(s)k´ō-g^{w}- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *g^{w}-ն աճական է:

4. «Ցնցվել, տատանվել, շարժվել» իմաստով բառեր

Ցունց (ցանձ) «թափահարում, շարժում, տատանում, թոթվում» (որից՝ **ցնցել, ցնցխ(տ)ել** [7, VI, 278], **ցնցտել** [8, IV, 468] «թոթվել, թափ տալ», **ցնցխազ** «թրթռուն, թրթռացող (ձայն)» [7, VI, 278], **ցանձել** «թոթվել, թափ տալ») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [4, IV, 463]: Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման՝ քիչ հավանական համարելով կապը հ.-ե. *k´enk- «տատանվել» արմատի հետ [9, 744]: Նկատի ունենալով թե՛ իմաստային, թե՛ ձևային մերձավորությունը վերոհիշյալ **ցնծալ** «թռչկոտել, խայտալ, հրճվել», **ցնցղել** «շաղ տալ, ցողել, ցայլել», **ցուց(ք)** «ցնծություն, կայթ» բառերի հետ՝ առաջարկում ենք **ցունց** <*sk´ō-n-sk´- (**ցանձ** <*sk´ə-n-g´h-)

---

[13] Կա նաև **սկռել** «սկել» տարբերակը՝ սաստկական **ռ** միջածանցով [7, V, 362]:

[14] Ի դեպ, Ս. Մալխասյանցի բառարանում և մասամբ այլուր բաղարկված են **սկել** «սուզվել» և **սկանալ** «սիկ՝ տիղմ դառնալ, նստվածք տալ» բառերը [8, IV, 227-228], [7, V, 361], [2, 1310]:

<*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *n-ն և *sk´/*g´h-ն աճականներ են[15]:

ճօճ (ճաւճ) «1. շարժում, 2. տատանում, երերանք, 3. կախօրրան, 4. (բրբռ.) մի տեսակ պար, 5. դյուրաթեք, ճկուն, 6. սիրուն, գեղեցիկ, նազելի[16]» (որից՝ բրբռ. **ճօճալ** «սեթևեթել, կոտրատվել» **ճօճկտալ** «սեթևեթելով քայլել, կոտրատվելով ճեմել՝ զբոսնել, կաքավել» [7, III, 409]) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, III, 217], [9, 498]: Հաշվի առնելով իմաստային ընդհանրությունը վերոհիշյալ **ցունց** արմատի հետ («տատանում»)՝

---

[15] Այլ լեզուներում առկա զուգաբանություններից հիշենք՝ լիտվ. šuoli-s «ցատկոտել, ցնցվել» [13, *sk'el-], հ.անգլ. hriø «տենդ», հ.բ.գերմ. (h)rīdōn «ցնցվել, դողալ», (h)ritto, rito «տենդ», մ.իռլ. crith «ցնցում, տատանում, դող, տենդ», կիմր. cryd «օրորոց, տենդ», ysgryd, կոռն. scruth, բրետ. skrija «ահից սարսուռ» [13, *(s)kreit-], հ.հնդկ. ksubhyati, ksōbhatē, ksubhnōti, ksubhnāti «ճոճվում է, դողում է», սերբ.-խորվ. скупсти, скубем «քաշել, ցցել [13, *skūbh-], կսմթել», դան. skvalpe «ճոճվել, թափահարվել, ծածանվել» [13, *skʷalb- / *skʷelb-], հ.բ.գերմ. scutten «թափ տալ, հրել», լիտվ. kutēti «թափ տալ», հ.նորվ. hossa «ցնցվել, աքացի տալ», հ.անգլ. scuddian «ցնցվել, ճոճվել, տատանվել, տարուբերվել, թափահարել», մ.անգլ. scuderen, մ.նիդ. scudden; scuderen «դողալ, դողդողալ», հ.սաքս. skuddian «տատանվել, ցնցվել», մ.բ.գերմ. schütelen, լատ. quatiō, -ere «տատանվել, ցնցվել, ճոճվել», quassus «ցնցում, տատանում» [13, *(s)kʷat-, *(s)kaut-], անգլ. shake, շոտլ. schake, schak, արևմ.ֆրիզ. schaekje «ցնցել», նիդ. schaken «փախչել, մաքրել, ցնցել», schokken «թափահարել, ցնցել», ս.գերմ. schaken «շարժել, հեռացնել, հրել, ցնցել», schacken «թափահարել, ցնցել», շվեդ. skaka «ցնցել», ռուս. скакать «ցատկել» <*(s)keg-, (s)kek- «ցատկել, շարժել» [16, shake], անգլ. shock, shog «ցնցում», իսլ. skykkjun «դողդոջուն» <*(s)kAg', *(s)eg- «ցնցել, իրարանցում, խառնաշփոթ» [16, shock]: Հմմտ. նաև ռուս. качать «ճոճել»:

[16] **ճօճ** բառի այս վերջին՝ «սիրուն, գեղեցիկ, նազելի» իմաստը հաճախ առանձնացվում է՝ որպես **ճօճ** «տատանում» բառի տարարմատ համանուն [4, III, 218], [9, 682]: Սակայն **ճոճկտալ**, այլև նույնարմատ **շոշոկել** «ջանալ գեղեցիկ երևալու, պչրվել, նազկտալ» <*շոկ- <*skho-g-՝ կրկնությամբ [9, 592] բառերը վկայում են, որ ունենք մեկ միասնական **ճօճ** արմատ՝ իմաստային ճյուղավորումներով:

առաջարկում ենք **ճօճ** < **ճաւճ** <*sk´hau-gʷy-/*sk´heu-gʷy- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *gʷy-ն աճական է[17]:

ճլորթի «ճոճանակ» և **ճլորքվել** «ճոճվել» [7, III, 394], [8, III, 213] բառերը ստուգաբանական բառարաններում չկան: Ակնհայտ է, որ դրանց ընդհանուր հիմքն է **ճլոր-**, իսկ **թ-**ն աճական է, **ի-**ն և **ք-**ն՝ ածանցներ (**թ+ի** «աճական+ածանց» կապակցության համար հմմտ. *յուռ-թ-ի, մոր-թ-ի*): Ելնելով **ճօճ** բառի հետ հոմանշությունից՝ կարելի է առաջարկել **ճլ-որ-** <**ճուլ-** <*sk´hō-l- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը (**-որ** ածանցի համար հմմտ. *գլ-որ, պղտ-որ, մոլ-որ, բոլ-որ, բեկ-որ, հատ-որ, կտ-որ, կլ-որ, յորդ-որ «խրախուսյս», յորդ-որ «առատ»* ևն): Չևի առումով հմմտ. նաև վերոհիշյալ նույնարմատ **ցըլ տալ, սղղալ, սռղալ, սղալել, ծուլ լինել** բառերը:

ճեմել «ման գալ, զբոսնել, սիգալով՝ վեհորեն քայլել» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ *čām «ճեմք, նազելով քայլվածք» հոմանիշից՝ չնայած **ā > է** անցման անսովորությանը [4, III, 195-196]: Գ. Ջահուկյանը համաձայն է այս կարծիքին [9, 491-492]: Նկատի ունենալով վերոհիշյալ **ճօճալ, ճօճկտալ** բառերի հետ իմաստային ընդհանրությունը («քայլել, զբոսնել») և ձևային նմանությունը, ինչպես նաև **սէգ** բառի հետ իմաստային ընդհանրությունը («վեհ»)՝ առաջարկում ենք այս բառի բնիկ հ.-ե. ծագման վարկած՝ **ճեմ-** <*sk´he-m- <*sk´ei- «ցատկել, վազել» ստուգաբանությամբ, որտեղ *m-ն աճական է[18]:

---

[17] Այլալեզու նույնարմատ զուգահեռներ են՝ հուն. κράδη «ճոճանակ; վերև», κραδάω «ճոճվել» [15, № 1736], հ.անգլ. scuddian «ցնցվել, ճոճվել, տատանվել, տարուբերվել, թափահարել», հ.սաքս. skuddian «տատանվել, ցնցվել», մ.բ.գերմ. schut «հետուառաջ շարժվել», schütelen, schütteln «տատանվել, ցնցվել», hotze, hotsche «օրորոց», լատ. quatiō, -ere, quassī, quassum «տատանվել, ցնցվել; ճոճվել» [13, *(s)kʷat-, *(s)kAut-] և այլն:

[18] Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ լատվ. suõlis, suola «քայլ» [13, *sk'el-], հ.իսլ. skriða «ընթանալ», ն.բ.գերմ. schreiten «քայլել», լիտվ. skrieti (/skrieti), skreja, skrējō «քայլել, շարժվել», լատ. crīsō(/crissō), -āvī, -āre «ճիշտ շարժվել» [13, *(s)krey-], մ.իռլ. ceird «քայլելը», կիմր. cerddaf «քայլել» [15, № 1736], լիտվ. šuolys «վարգ», լատվ. suolis «քայլ», ալբ. škel- «քայլ» [15, № 1727] և այլն:

Շոհանալ «ճեմել, ման գալ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [4, IV, 240-241], [9, 686]: Քանի որ իմաստով հարում է վերոհիշյալ **ճեմել** բառին, իսկ ձևն էլ թույլ է տալիս կապելու դրա նախաձևին, առաջարկում ենք **շոհ-**անալ <*skho-gʷh- <*skʹei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որտեղ *gʷh-ն աճական է (համմտ. վերոհիշյալ **սահ-ել** բառի ստուգաբանությունը):

Եզրակացություն

Այսպիսով ներկայացրինք հայերեն մի շարք բառեր (**սայթաքել, սոթ տալ, սահել, սահնակ, սղղալ, ցըլ տալ, սողալ, սպրդել, սղալել, շօշափել, շոյել, քսել, փաղաքուշ, սուր(հ)ալ, սուրհանդակ, սուրհապ, սոյզ, սկել, ցունց, ճօճ, ճեմել, շոհանալ**), որոնք մեծ մասամբ մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևույթային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են այդ բառերի ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերված են հ.-ե. *sk'ei- «ցայտել; ցատկել» արմատից: Նաև ներկայացվել են բառասկզբի հ.-ե. շարժուն *s-ով *(s)k$^{(ʲ)(ʷ)}$(h)- կապակցության դիմաց բաղաձայնական **ս/ց/շ/ք/ճ** հերթագայության նոր օրինակներ: Այս բառերը կազմում են հոմանիշային խմբեր (**սայթաքել – սոթ տալ – ցըլ տալ – սահել – սղղալ – սողալ, շօշափել – շոյել – շփել, սուզվել – սկել, ցնծալ – ցնցել, ճօճ – ճլորթի** և այլն), որոնք առնչվում են իմաստային հանրույթային կապերով: Դրանց միջև փորձել ենք տեսնել նաև ձևային-ծագումնաբանական ընդհանրություն՝ հիմնավորելով դա ներքին ու արտաքին համեմատություններով և ստուգաբանական բանաձևումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբեկյան Մ., Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Երևան, 2017:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
3. Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Երևան, 1971-1979:
5. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան, 1957:
6. Զաքարյան Հ., «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն. // «Զահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 65-76:
7. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. 1-7, Երևան, 2001-2012
8. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1944-1945:
9. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:
10. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
11. Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:
12. Martirosyan H., Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Brill, 2008.
13. Nikolaev S., Database of Indo-European etymology. / http://starling.-rinet.ru/ (13.09.22)
14. Olsen B., The noun in Biblical Armenian: Origin and word-formation: with special emphasis on the Indo-European heritage (Trends in linguistics. Studies and monographs; 119), Berlin, New York: Mouton de Gruyter, 1999.
15. Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 2005. / http://dnghu.org/indoeuropean.html (12.09.22)
16. Wiktionary. / https://en.wiktionary.org/wiki (14.09.22)
    Викисловарь. / https://ru.wiktionary.org/wiki (11.09.22)

ЭТИМОЛОГИЯ НЕСКОЛЬКИХ АРМЯНСКИХ СЛОВ СО ЗНАЧЕНИЯМИ «СКОЛЬЗИТЬ», «НЫРЯТЬ» И Т.Д.

Оганнес Закарян

Резюме

Ключевые слова: *армянский язык, праиндоевропейский язык, корневые варианты, начальный звук, детерминатив, чередование, аффикс, заимствование.*

Некоторые армянские слова, обозначающие «скользить», «нырять» и т.д., считаются заимствованными или же неэтимологизированными. В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются их новые этимологии, согласно которым данные слова расцениваются как исконно армянские слова индоевропейского происхождения. Эти слова: սաթաք-ել «поскользнуться» <*(s)k´əi-t- <*sk´ei- «прыгать; бегать», սահել «скользить» <*(s)k´əi-t-, սող-ալ «ползти» <*(s)k´o-l-, շաւշափ-ել <*շափ+շափ- «1. щупать, 2. касаться» <*skhə(u)p-, շոյ-ել «поглаживать» <*skhou-/*skheu-, քս-ել «1, тереть, 2, мазать» <*քիս <*(s)kō-k´-, սուր(հ)-ալ «мчаться» <սոյր(հ)- <*(s)k´ou-r-(ti)-, սոյզ- «погружение» <*(s)k´ou-g´h-, ցունց «тряска» <*sk´ō-n-sk´-, ճաւճ-ել «качать» <*sk´hau-gwy-/*sk´heu-gwy-, ճեմ-ել «гулять» <*sk´he-m- и т.д.

Итак, в данной статье представлен набор слов, который по большей части до сих пор считался не имеющим достоверной этимологии или же относился ка заимствованным из других языков. На основе звукового, морфемного и смыслового анализов нами предложена новая гипотеза относительно этимологии данных слов, согласно которому их происхождение связывается с корнем «ցայտել; ցատկել» (брызгать, скакать). Данные слова составляют синонимические группы (սայթաքել – սոթ տալ – ցըլ տալ – սահել – սղոալ – սողալ, շօշափել – շոյել – շփել, սուզվել – սկել, ցնծալ – ցնցել, ճօճ – ճլորթի, которые связаны на смысловом уровне. На наш взгляд, между указанными словами имеются также формально-генеалогические связи, которые проявляются на их внешних и внутренних этимологических признаках.

THE ETYMOLOGY OF SEVERAL ARMENIAN WORDS WITH THE MEANING «SLIDE», «DIVE» ETC

Hovhannes Zakaryan

Summary

Key words: *Armenian, Proto-Indo-European, root variants, initial sound, determinative, vowel gradation, affix, s-mobile, loanword*

Several Armenian words with the meaning «to slide», «to dive», etc. are considered to be borrowed or not to be etymologized. Based on phonetic, orphological and semantic analysis, the present article suggests new etymologies for them, according to which those words are native Armenian words of Indo-European origin. They are: **սայթաք-ել** «slip» <*(s)kʹəi-t- <*skʹei- «jump, run», **սահ-ել** «slide» <*(s)kʹəi-t-, **սող-ալ** «crawl» <*(s)kʹo-l-, **շաւշափ-ել** <*շափ+շափ- «1. palp, 2. touch» <*skhə(u)p-, **շոյ-ել** «stroke» <*skhou-/*skheu-, **քս-ել** «1, rub, 2, smear» <*քhu <****(s)k**ō-kʹ-, **սուր(հ)-ալ** «race» <սոյր-(հ)- <*(s)kʹou-r-(ti)-, **սոյզ-** «dive» <*(s)kʹou-gʹh-, **ցունց** «shaking» <*skʹō-n-skʹ-, **ճաւճ-ել** «swing» <*skʹhau-gʷy-/*skʹheu-gʷy-, **ճեմ-ել** «stroll» <*skʹhe-m- etc. Thus this article presents a set of words most of which were thought to have no reliable etymology or to have been borrowed from other languages. On the basis of phonetic, morphological and semantic analyses, new hypotheses of the etymology of these words were proposed, according to which they originate from the root "ցայտել; ցատկել" (to splash, jump). These words make up synonymous groups (սայթաքել – սոթ տալ – ցըլ տալ – սահել – սղոալ – սողալ, շօշափել – շոյել – շփել, սուզվել – սկել, ցնծալ – ցնցել, ճօճ – ճլորթի etc.), which are connected by semantic public bonds. An attempt has also been made to find a formal genealogical commonality between them, basing this on external and internal comparisons and etymological formulations.

УДК 81'374

О ЛИНГВОДИДАКТИЧЕСКОЙ ЦЕННОСТИ УЧЕБНОГО СЛОВАРЯ

Лариса Маденян

Ключевые слова: *морфема, аффикс, семантизация, словарный запас, словообразовательное значение, производное слово, дидактический сборник, словарь-справочник*

Сегодня выдвигаются высокие требования к качеству профессиональной подготовки будущих специалистов в различных областях знания. Особую важность приобретает формирование профессиональной лингвистической и коммуникативной компетенции студентов. Обучение русскому языку на неязыковых факультетах вуза направлено на формирование у студентов уровня коммуникативной компетенции, позволяющего им применять полученные знания, умения и навыки иноязычного общения как в профессиональной деятельности, так и в целях самообразования. В этом отношении методика изучения лексики русского языка в национальной аудитории в качестве одного из мотивов обучения выделяет последовательность, целенаправленность и методически качественно организованную работу по усвоению лексики, состава слова и системы русского словообразования. Изучение и понимание механизма, форм и средств русского словообразования является необходимым условием для полного овладения русской речью студентами-бакалаврами, которые обучаются на неязыковых факультетах.

Разработка конкретных методических рекомендаций по изучению раздела словообразования как средства пополнения словарного запаса по специальности значительно затруднена из-за отсутствия учебного словаря-справочника, где были бы даны сведения о некоторых морфемах русского языка, их семантических характеристиках, сочетаемости с основами различных частей речи, словообразовательных связях, продуктивности, частотности. Такой словарь служил бы хорошим практическим пособием при изучении

норм русского словообразования. В этом мы видим актуальность создания такого учебного пособия.

Каждый, кто впервые приступает к изучению русского языка как языка специальности или к чтению специализированных текстов на русском языке, не являющемся для студента родным, убеждается в необходимости узнать как можно больше о смысловом значении аффиксов, образующих новое производное слово, о возможности сочетать определенный аффикс с другой основой с целью получения в перспективе схожего/различного слова. Для успешного обучения профессионально-ориентированному изучению текста по специальности в вузе следует грамотно организовать самостоятельную работу студента с профессионально - ориентированным текстом. По мнению П.И. Пидкасистого, «соответствующая организация самостоятельной учебной работы является одним из самых доступных и проверенных практикой путей повышения эффективности занятия. Она занимает исключительное место на современном занятии, так как студент приобретает знания только в процессе личной самостоятельной учебной деятельности» [4, 202]. В основе русского правописания лежит морфологический принцип написания слов, следовательно, грамотное письмо также предполагает знание и учет всех особенностей (структурных и семантических) употребления морфем русского языка с целью устной и письменной профессиональной коммуникации. Сведения о нормах правильной устной и письменной речи, богатой производной лексикой от уже известной студенту в той или иной профессиональной области можно получить, обратившись к различным лингвистическим словарям. В связи с этим перед преподавателем вуза ставится задача формирования лексикографической компетенции как способа пополнения собственного словарного запаса.

Первые попытки систематизировать производные слова русского языка принадлежат А.А. Шахматову и В.В. Виноградову, Н.М. Шанскому [7, 1, 8]. Относительно подробный инвентарь морфем представлен в Академических грамматиках русского языка. Так, Грамматика-60 [3] дает описание служебных морфем имён

существительных, классифицируя их по следующим группам: 1. суффиксы – названия лиц (мужского и женского пола) и лиц с добавочным значением невзрослости, детскости или сознательной неполноценности; 2. суффиксы – названия лиц общего рода; 3. суффиксы – названия предметов (включая название орудий действия и названия места, помещения); 4. суффиксы с отвлеченным значением; 5.суффиксы эмоциональной оценки. На наш взгляд, весьма удачная попытка дать описательную характеристику морфем русского языка предпринята З.А. Потихой в книге «Современное русское словообразование» [5]. В этом пособии, предназначенном для учителей, содержатся все необходимые сведения о словообразовании русского языка; причем, словообразование рассматривается здесь традиционно, в соответствии с частями речи, и уже в пределах каждой части речи рассматриваются определенные морфемы, которые подразделены на группы по значению. Все морфемы сведены в таблицы. Так, суффиксы имён существительных здесь представлены в следующих группах: 1. названия лиц женского пола; 2. названия лиц мужского пола; 3. существительные общего рода; 4. названия животных; 5. названия предметов, места; 6. названия предметов и явлений с отвлеченным (абстрактным) значением; 7. суффиксы собирательности/единичности; 8. суффиксы субъективной оценки.

Суффиксы здесь располагаются в обратном порядке, приставки – в прямом алфавитном порядке. Следует отметить, что здесь словарная статья содержит сведения о семантике морфем, их словообразовательных связях и этимологии. Однако представленный перечень морфем далеко не полный. Наиболее полная характеристика морфем русского языка представлена в Грамматике-80 [6]. Материал в ней располагается в рамках каждой части речи в соответствии со способом словообразования. В зависимости от части речи указываются мотивирующие слова той или иной морфемы, определяется словообразовательный тип с общим значением, а в рамках общего значения и в зависимости от частей речи даются указания на подтип СЗ (словообразовательное значение) и частное

значение морфемы. Однако подобная классификация также не позволяет составить полного представления о значении той или иной морфемы, её сочетательной способности. Во всех вышеперечисленных работах морфемы систематизируются, как правило, по частям речи, а внутри каждой отдельной части речи – уже по значениям; не всегда чётко определяется семантика морфем, нет достаточно полных списков аффиксов русского языка и, следовательно, нет как такового системного словаря семантики морфем, в котором в последовательном порядке были бы представлены все словообразовательные аффиксы русского языка с точки зрения их значения и сочетательных возможностей. Аффиксы, как известно, употребляясь только в составе слова и отдельно от слова не встречающиеся, всегда вносят дополнительные семантические значения, взаимодействуя с определенным корнем и уточняя его определенным образом.

Важнейшим компонентом учебного процесса, средством его организации и оптимизации, как известно, признаны учебники и учебные пособия. Исходя из положения И.Л. Бим о том, что «учебник для преподавателей – это орудие практической деятельности, от которого во многом зависит успех их труда» [2, 78], мы предприняли попытку создания словаря морфем русского языка, который соответствует своему прямому назначению – служит учебно-методическим пособием при изучении системы норм русского словообразования. В созданном словаре реализован подход к систематизации теории и практики по обучению русской лексике и словообразованию, при построении которой были учтены деятельностная, лингвистическая, интеллектуальная составляющие процесса речевого общения студентов, изучающих русский язык как язык специальности (но неродной). Словарь может оказать большую помощь в практической работе по лексике русского языка при изучении текстов по специальности на различных факультетах, дать детальное описание всех значений определенных морфем и их вариантов, определить их продуктивность / непродуктивность, частотность / единичность в определенной профессиональной

сфере для образования новых производных слов. Такое учебное пособие позволяет определить не только круг теоретических вопросов, достаточных на различных этапах обучения русскому языку как языку специальности, но и построить научно обоснованную методику его преподавания в национальной аудитории, ибо основным критерием качественных знаний по русскому языку вообще и словообразованию, в частности, мы считаем учёт студентами основных теоретических понятий, предлагаемых различными лингводидактическими сборниками, а основным критерием умения – активное языковое мышление и способность самостоятельно применять полученные знания не только по предложенным образцам, но и в изменённой ситуации. В своей работе мы руководствовались следующими принципами и критериями отбора материала:

1. Учебный словарь семантизации морфем должен соответствовать своему прямому назначению – служить учебно-методическим пособием при изучении словообразовательной системы русского языка, его морфемного состава. В словаре должна быть охарактеризована каждая служебная морфема с точки зрения ее семантических признаков.

2. Словообразовательная система рассматривается с синхронной точки зрения, поэтому в словаре нашли свое отражение морфемы, реально существующие в производных словах русского языка на современном этапе.

3. Содержание словаря составляет наиболее полные сведения о словообразовательной семантике служебных морфем и их словообразовательных связях.

4. Индексация значений морфем и выделение при помощи цифровых обозначений основных и факультативных (дополнительны) значений данной морфемы позволяет учащимся лучше ориентироваться в многообразии морфемных форм и их оттенков значений в зависимости от основы мотивирующего слова, от части речи.

5. Все морфемы расположены в обратном алфавитном порядке,

что дает возможность быстро ориентироваться при нахождении нужной морфемы или ее варианта.

6. Морфема характеризуется с точки зрения ее семантики.

Сведения о морфемах в словарной статье представлены в следующем порядке: морфема, ее морфы и алломорфы; частеречная характеристика морфемы; направление мотивации; семантическая характеристика морфемы; частеречная характеристика основы, к которой присоединяется рассматриваемая морфема. В процессе пользования учебным словарем у учащихся должны быть сформированы определенные умения и навыки, включающие в себя: а) учебно – познавательные, умение отделять окончание от основы, членить основу на части (морфемы), определять способ словообразования; б) квалификационные, т.е. умение подбирать однокоренные слова (в том числе с чередованием гласных и согласных в разных частях слов) и слова с одинаковыми приставками и суффиксами; в) аналитико-обобщающие – т.е. умение производить морфемный и словообразовательный разбор слов, устанавливать смысловые связи. Последнее из умений особенно важно, так как именно с процесса толкования слова и начинается его морфемный и словообразовательный анализ.

Тщательному усвоению раздела словообразования, возможности свободно оперировать словообразовательными моделями, правильному пониманию семантики производного слова способствует понятие о словообразовательной ценности, под которой мы понимаем морфемную и словообразовательную структуру слова, его принадлежность к определенному СТ (словообразовательному типу), отношение к модели словообразования, указание на регулярность/нерегулярность модели внутри типа, т.е. способность слова к производству новых однокоренных слов. В практике обучения лексике и словообразованию применение словаря семантизации морфем помогает увидеть, что одни и те же морфемы повторяются в разных словах, и запоминание этих типовых деталей необходимо для последующего «узнавания» их в неизвестных словах и, следовательно, их понимания.

Предлагаемый нами словарь является одной из разновидностей учебных словарей. Необходимость создания данного словаря была полностью продиктована состоянием современной лингвистики и методики преподавания русского языка как неродного, потребностями обучения русского языка в РА. Создание его было вызвано также преобладающей в настоящее время практикой составления словарей – лексикографированием по уже имеющимся моделям и образцам на заведомо известном языковом материале. Потребность в словаре, который регламентировал бы употребление в процессе образования новых слов уже известных словообразовательных средств, определяется еще и тем, что изучающий русский язык может знать, какие существуют в языке словообразовательные средства, каким способом образовано новое производное слово от одной и той же части речи, какое слово (значение) в результате получится, но учащийся (изучающий русский язык как иностранный) не может знать всех возможностей данной морфемы по образованию «энного количества» новых слов, их значений и оттенков значений, которые сможет образовывать данная морфема, если она будет сочетаться с теми или иными основами. Учащийся не всегда в состоянии по структуре производного слова определить значение нового производного слова.

Первая часть нашего словаря служит лингвистической основой для рецептивных и репродуктивных действий на русском языке, а именно для чтения, распознавания значения незнакомых слов в изучаемом тексте, для определения значения словообразовательного аффикса, для самостоятельного продуцирования новых слов. Вторая часть словаря вместе с любым идеографическим словарем русского языка может составить качественную лексикографическую и лингвометодическую основу для продуктивных действий на русском языке. Словарь ставит своей главной целью научить устанавливать структурно-семантические связи между родственными словами; строить словообразовательные ряды и гнёзда родственных слов; определять лексическое значение анализируемых производных слов с ориентацией на семантику морфем, их составля-

ющих, или на значение производящих основ.

В качестве лингвометодического обоснования необходимости такого рода лексикографического справочника приводим следующие положения:

1. Изучение лингвистической и методической литературы, анализ знаний, умений и навыков студентов по образованию и объяснению значений новых слов показали, что речевая реализация словообразовательных моделей является проблемой лингводидактики, которая нуждается в разработке как в теоретическом, так и в практическом планах.

2. Наличие словообразовательного минимума, преемственность в изучении тем по словообразованию, специально ориентированное обучение является наиболее эффективным условием формирования навыка понимания незнакомых слов. На основе уже имеющегося у студента речевого опыта и владения приемами анализа слова у студентов развивается языковое чутьё и языковая интуиция.

3. В целях дальнейшего повышения эффективности обучения будущих учителей, переводчиков, социальных работников, психологов и др. целесообразно создание специального дидактического пособия, в котором работа над лексикой учебных текстов сопутствовала бы изучению категорий языка на всех уровнях в соответствующих Госстандарту объемах, а в качестве основной единицы обучения были бы использованы и словообразовательные модели.

4. Эффективность работы по словообразованию во многом обеспечивается целенаправленным отбором словообразовательных моделей с учетом критериев частотности их употребления, практической необходимости, выводимости, продуктивности, нормативности, структурной валентности слова.

Разработка соответствующей системы упражнений с использованием предложенного нами словаря предполагает решение следующих задач: достижения путем хорошо продуманной системы заданий сознательного усвоения некоторых понятий морфемики и словообразования; рассмотрение каждой морфемы как значимой единицы; обучение студентов работе над словом не только как над

готовой единицы языка, но и над его значимыми частями; выведение значения словообразующих аффиксов путем сопоставления значений производящей и производной основы; обучение студентов пониманию значения производного слова на основе составляющих его морфем; введение продуктивные типов образования новых слов с целью расширения словарного запаса студентов, формирования их потенциального словаря; обучение навыкам морфемного и словообразовательного анализа; умение связывать значение слова с его написанием (с учетом его строения).

В результате опытного обучения и длительного наблюдения нами установлено, что работу над производной лексикой целесообразно разделить на этапы: распознавание опорных компонентов производных слов; разграничение формы слова и лексического значения слова; декодирование компонентов производных слов; образование производных слов и элементы словообразовательного анализа; работа по моделям; перевод на армянский язык; подбор синонимов и антонимов; составление словосочетаний и предложений. Каждому этапу при этом соответствуют определенные виды заданий, углубляющих представление учащихся о производной лексике. К ним относим виды работ: деление слова на составные части (проанализировать состав слова), вычленить суффикс, приставку из состава слова; выделить из состава слова образующую (т.е. производную) основу; выделить основу слова и определить ее значение, выделить основу и определить, является ли она производной или непроизводной (в первом случае продолжить членение); выделить производящую основу; определить направление словообразования; образовать от основ производные слова при помощи данных аффиксов; образовать от основ сложные слова; сгруппировать слова по аффиксам; сгруппировать слова по корневому элементу; сопоставить значение слов с одинаковой основой и разными аффиксами; сгруппировать попарно слова с аффиксами, имеющими противоположное значение или синонимическое значение; подобрать антонимы, отличающиеся только аффиксами; сгруппировать слова, отличающиеся одним корнем, но разными

аффиксами, определить их значение; определить части речи, от основы которых образовано данное слово; сгруппировать слова с одинаковыми суффиксами и посмотреть, какими частями речи они являются; сделать вывод о том, какие грамматические признаки слова можно определить при помощи данного аффикса. Все задания можно сгруппировать по темам изучения и представить в виде системы упражнений для работы с использованием описанного словаря. Для иллюстрации приведем лишь некоторые из них:

1. Из списка «1000 самых употребительных слов» выделите группу слов, приставки которых имеют значение: «находящийся по ту сторону, за пределами того, что названо словом (или сочетанием слов), которым, в свою очередь, мотивировано суффиксальное мотивирующее прилагательное (заоблачный, закадровый).

2. Дифференцируйте значение приставки за-, используя общий список значений морфем, содержащийся в словаре: заплечье, заречье, запястье, Замоскворечье, забег, заплыв, заезд, залесье и др.

3. От данных слов при помощи суффикса *-ист* образуйте слова со значением: «характеризующийся свойством, взглядами или сферой занятий, которые названы мотивирующим прилагательным или словосочетанием с мотивирующим прилагательным в качестве определения». Слова: архаический, специальный, станковая живопись, фигурное катание.

4. Образуйте глаголы по моделям: а) приставка со значением «наружу» + основа, обозначающая движение; б) приставка со значением «заново» + основа, обозначающая действие; в) корень со значением «движение» + суффикс однократного действия.

Система упражнений, предложенная в целях повышения эффективности обучения русскому словообразованию, характеризуется учетом тех явлений, которые вызывают у студента затруднения при изучении данного раздела языка. В целях дальнейшего повышения эффективности обучения целесообразно создать специальный учебный комплекс, состоящий их учебника, дидактического сборника и словаря.

3. «Խումհար» վիպակի մեջ պայմանականորեն երրորդ միկրոսցենարը կամ սցենարական հայտը անվանենք «Ցորեն». «Ղարաբաղը ես լսելով գիտեմ: Հետո՝ նրանց միրգը համեղ է, հետո՝ նրանց լոբին ընկույզի համ ունի, հետո՝ ժողովուրդն է խաղաղ, իմաստուն – ամեն ինչ գիտի ու ձեն չի հանում: Գյուղի անունը դնենք Արևիկ: Հասկի անունը դնենք կարմրահատ: Բակերում կարպետներին որ փռում են՝ լույսը կուրացնում է: Մորեխ է թե մրիկ, եկեին է թե չորեին՝ նա կա, հազար տարի էստեղ է, Արևիկի ամենաբնիկ տոհմն ինքն է – արմատը խրել ու հազար տարվա խորքից գյուղի համար կյանք է հանում: Ուրիշ տեսակներ խփում ու հեկտարից քառասուն ցենտներ հատիկ են տալիս – նա միշտ քսան է կամ էնքան է ինչքան որ է, քանի որ Արևիկում չեն հաշվում թե ինչքան է – էսքա՛ն է: Կամ՝ Արևիկում հեկտարանոց հող կա՞, որպեսզի հաշվեին, թե կարմրահատը հեկտարից ինչքան է տալիս: Կարպետի, աղջկա գոգնոցի, սինու, մաճկալի ափի, ղարաբաղցիք օփի, հոփի են ասում – մաճկալի մի հոփի չափ՝ կարմրահատի արտերը

շաղ են եկել կաղնուտ արևային լանջերին, աղջկա գոգնոցի պես կտորը կտորին բեր՝ որ մի նախշուն օրավար լինի: Ուրիշ տեսակներ գնում խփում ոսկի մեդալ են բերում,– սրա բույրը ծածանվում է միայն Արևիկի վրա: Աշխարհը լիությունից տրաքում է՝ սրանք նույն կիսաքաղցն են: Հիմա... վաթսունմեկ թվականն է, վաթսունմեկ թվական աշունը: <...> Լենկթեմուրից անցել է, թուրքերից ու մորեխից անցել է, հազար ինը հարյուր վաթսունմեկ թվականի աշունն է, երեկ: <...> վաթսուներկուսի գարնանը կարմրահատից մնացած է լինելու մի կճուճ ձավար: <...> այնտեղ՝ արդեն տարիների հեռվում, մոբիլիզացված ավտոշարասյունը եկել կանգ էր առել, ջոկատայիններըը, ինչպես կարգն է, կարևոր կետերում ցցվել ու անթարթ սպանել[3] էին, և կարմրահատը քսանհինգ րոպեում մինչև վերջին պարկն ու տակի աղբը բարձվել էր մեքենաներին: Հետո Բաքվից կարգադրել էին սերմացու ետ տալ, բայց կարմրահատն արդեն խառնված-աղացված-կերված էր եղել» [3, 350-351]:

Նկատենք, որ այս հատվածը չկա վիպակի առաջին հրատարակության մեջ, տեղ է գտել 1978-ին հրատարակված «Ծառերը» ժողովածուի մեջ [7, 54-55]:

«Աշնան արև» վիպակում ընդամենը մի նախադասությամբ փոքրիկ պատմություն է հիշատակվում. «Օժիտակալ կարպետը իմ պապոնց տնից է բերել իմ մերը, իմ պապոնց տուն էլ եկել է իմ մոր պապոնց տնից, Արճեշից» [3, 515]: Իսկ «Աշնան արև» կինովիպակում «համարժեք» հատված կա, երբ Աղունն իր հարևանուհի Արուսին պատմում է նույնը մանրամասնորեն. «Իմ մոր կարպետն է: Արճեշա իմ տատի բաժինքն է իմ մորը. Արճեշ էս կարպետը եկել է իմ տատի մոր Էրզրումից, Արուս ջան: Իմ լույս մոր հանգչելուց հետո իմ մայրիկի էս կարպետը իմն էր լինելու, բայց իմ Իշխան

[3] Այս բառը հանդիպում է 1990 թ. հրատարակված «Վիպակներ» ժողովածուի մեջ, ինչպես նաև 1985-ի «Երկերի» 2-րդ հատորում [6, 144], իսկ «սպասել» բայը հանդիպում է «Ծառերը» (1978) ժողովածուի մեջ [7, 55] և 2004-ի «Հատընտիրի» առաջին հատորում [8, 608]: Ամենայն հավանականությամբ գործ ունենք նկատելի վրիպակի հետ, և ավելի նախընտրելի է «սպասում էին» բայը:

հերը տվել էր իրա քրոջն ու իմ հորաքրոջը, իմ հորաքույրն էլ՝ Դսեղ՝ իր աղջկան, Դսեղից էլ՝ Լեջան, հորաքրոջս թոռան տուն: Ինչո՞ւ: Գնացի տեսա տակները թախտին գցած – որովհետև իրենցը չի, հարազատ չի, համարյա թե պետք չի, բայց պետք է, Արուս ջան. քաղաքացիք պիտի տեսնեն, որ էդ Արմենակ տղան հանդից չի գտած, անտեր չի, թիկունքին սարի պես կանգնած ազգ ունի Ծմակուտից մինչև՛ Վանքեր ու Արճեշ ու Ղարաբաղ ու Էրզրում» [9, 186]: Կարևորելով վերջին միտքը՝ փաստում ենք ժամանակի ու տարածության մեջ դրսևորված ժառանգորդության հանգամանքը. Արմենակը ոչ թե անտոհմ, «անարմատ-անակունք օտար» [9, 271] է, տոհմական հիշողություն չունեցող գյուղացի, այլ իր տոհմի արժանավոր շարունակությունը: Այս նույն տագնապը կա Արևիկ գյուղի կարմրահատ ցորենի վերաբերմամբ, որ գյուղի ամենաբնիկ տոհմն է, որ «Լենկթեմուրից անցել է, թուրքերից ու մորեխից անցել է», սակայն այս նոր թուրքերից չի անցել: Կարմրահատը ոչ միայն ցորեն ու հաց է, այլև նյութական արժեք ու մշակութային հիշողություն, պատմություն, որի չգոյությունը դառնում է ողբերգություն: Սա էլ տագնապ է վասն հացի ու հիշողության: Երևույթի ահավորությունն ավելի է պարզվում, երբ հիշում ենք բակունցյան Լառ Մարգարի փրկած ծիրանի կորիզները, իսկ ահա Արևիկ գյուղի կարմրահատ ցորենը այլևս չկա:

Պարզվում է՝ ժամանակին Հր. Մաթևոսյանը «Ցորենը» վերնագրով ակնարկ է հեղինակել [10, 65-76]: Այս ակնարկի նյութն է դարձել «Խումհար» վիպակ ներմուծված հատվածի հենքը, բայց և լրացվել է, ձեռք բերել իմաստային կտրուկ և ընդարձակվող նրբերանգներ. ակնարկում գործողությունները տեղի են ունենում Անդրկովկասի մի գյուղում, հայտում՝ Ղարաբաղի Արևիկ գյուղում, ցորենի բռնագրավումը կենտրոնի կարգադրությամբ իրականացնում է միլիցիան, աստ՝ Բաքվի կարգադրությամբ և մոբիլիզացված ջոկատայինների կողմից: «Ցորենը» ակնարկում նկատվում են «Ահնիձոր» ակնարկի բացահայտ ազդեցությունը, «մենք ենք, մեր սարերը» կարգախոսի գերակայությունը: Թերևս այս ուղղակի կապն է խափանառիթ դարձել հրատարակության հարցում, սակայն սցենարական այս երրորդ հայտը եկել ու վիպակում գտել է

իր տեղը «Մեսրոպ», «Մրջյունները» հայտերից հետո և վասն հիշողության մարդկային ու գրողական տագնապի արտահայտություն է, որ հաստատում է չարենցյան դիտարկումը. «Երգը երկրի՛ց է աճում» [11, 397]:

4. Ինչ-որ տեղ անիմաստ է Հր. Մաթևոսյանի ստեղծագործության վերլուծությունը, քանի որ այն արդեն ոչ միայն պատկեր է, այլև այդ պատկերի վերլուծություն: Հիշում ենք հեղինակի «Պատիժը» պատմվածքը, բայց և հիշում ենք «Խումհար» վիպակում այդ պատմության համառոտ վերաշարադրանքը՝ այս անգամ ներկայացված Եվա Օզերովային, որ կարող ենք համարել սցենարական հայտ. «Շալվարը գրպան չունի: Հերն էնքան էր նիհար, ինչքան ինքը, սարի գլխից ոչ թե հերը գնաց, այլ ցուրտ քամին սեղմեց ու քշեց հորը դեպի ձմեռանոց: Կոլխոզի էլբրուս ցուլը դուռը փշրել է, իսկ նրանք եթե տավարած են, ուրեմն միայն էդ են, դուռը վարպետն է սարքելու, իրենք չեն կարող տախտակ տախտակի գցել, և հերը չարացած է ինչքան տղայի նիհարության, այնքան էլ նրանց անճար տավարության վրա: Թևը պարանի կապի մեջ՝ տղան ձեռները խցկել է շալվարի տակ աճուկների արանքը ու իջնում է: Ձների երեսը սառցակալած է. թաթի տեղով մեկ կոտրում ու խորը գնում է: Քաշելիս՝ ծնկից մինչև կոճը կեղևը քերում է: Գիտակցությունը սառչում է, նա այնինչ դեռ պիտի ջոկի ձների տակ որն է մրջնաթումբ, որը՝ խոտ և կույտի վրայից ձյունը դեռ պիտի ետ տա: Տղան ծղրտացել ու փախել է, և հիմա դռանը կանգնած է ու տուն չի մտնում, որովհետև խոտ չի բերել: Եկել իրենց դռանն է կանգնել՝ որպեսզի չմտածեն թե ձորն է ընկել ու գելը կերել է, բայց տուն չի մտնում՝ որովհետև արժանի չէ վառարանի մոտ կանգնելու: Մայրն իր գործերով ներսուդուրս է անում ու անտեսում է, քույրիկն ապակու սառույցը քերել ու ծակից նայում է, ախպերը ջրի վազեց դուռն ուժեղ թրխկացնելով, գոռգոռալով ու դուռը շխկշխկացելով, որպեսզի աղմուկի մեջ սառնամանիքը խլացնի: Հերը եկավ, գոմի սրահում խոտի շալակը թևերից հանեց, լուռ նայեց ու անցավ, ու բացվող դռան լույսի մեջ՝ հոր թիկունքից գոլորշի էր բարձրանում: Երեխաներն էլ, հերնումերն էլ գիտեին, որ նա իրեն պատժի է կանգնեցրել, ու լռում էին, որովհետև եթե ներս տանեին՝ նա

կնվաստանար, կոչնչանար, ճիճու կդառնար – իր կարգած պատիժը նա պիտի քաշեր: Բայց կյանքն իրենն արեց. նա գոմի սրահ մտավ թիկունքը հոր շալակով տաքացնելու՝ խոտն արդեն սառել էր, և նա մտավ գոմ, կովի մոտ ծնկեց ու ձեռները խցկեց էրաթաթիլանջի արանքը: Էրաթաթն առջևի ոտքն է: Եթե տաքանար ու այդպես հանկարծ քներ՝ նշանակում է իրեն աներեսաբար արժանի էր համարում ջերմության ու կյանքի, եթե հիմա սուսուփուս դուրս գար կանգներ դրսում՝ խաբած կլիներ, թե իմ պատիժը ես քաշում եմ,– և տղան առաջին անգամ ուզում է մեռնել, ոչ թե էնպես՝ մեռներ, դագաղում լիներ, լացուկոծ, ծնողների համար հոգսուհոգեհաց դառնար, այլ՝ չքանար, վերանար, չլինե՛ր, չլինե՛ր» [3, 371-372]:

Սա «Պատիժը» պատմվածքի «մանրակերտն» է, ուր կա զգացմունքայնություն, հուզական լիցք: Քիչ անց իրականացվելու է պատումի վերլուծությունը. «Իմ տղան լաց է լինում, որովհետև կովի համար խոտ չի բերել, բայց նրա շռայլ, միամիտ, անվարձ, մայրական ջերմությամբ տաքանում է: Կովը վիզը ծալել, գլուխը դրել է իր ու նրա ուսին և միասին քնում են: Եթե նիհար, թիկունքը լայն հորը չխղճար, եթե կարմրած խոշոր ականջներով ախպերիկի համար լացը չգար՝ իմ տղան կգնար մեռնելու: Կգնար կմեռներ, և հոր ծնկները կծալվեին, հերը կասեր «վայ քու տունը քանդվի, զավակ, ինչ իմ տունը քանդեցիր»: Հոր համար՝ իմ տղան չի մեռնում: Եվ մոր համար: Եվ եղբոր համար: Եվ քույրիկի համար, որ իր կարծիքով մայրիկից թաքուն քերել, ապակու վրա ծակ է արել, դրսում հիմա մութ է, ծակից սարսափելի մի աչք է նայում՝ իր աչքը, բայց քույրիկն ուզում է եղբորն այդ ծակով դրսում տեսնել և ամեն անգամ հանդիպում է սարսափելի այդ աչքին: Քրոջ չարչարանքի ու վախի մասին մայրը գիտի ու քթի տակ ուրախանում է: Իմ տղան մենակ չէ, նրանք բոլորն իմ տղայի մեջ են: Հերը գիտի, որ տղան տաք գոմում է, ու հանգիստ է: Տղան գիտի, որ հերը հանգիստ է, և եթե թոկը հիմա մեխից իջեցնի, վիզը զցի ու կախվի՝ հորն ստորաբար խաբած, հոր արդար գլխին թաքուն խփած կլինի - «Քու տունը քանդվի, տղա, ինչ իմ տունը քանդեցիր»» [3, 373]: «Պատիժը» պատմվածքին վերաբերող այս հատվածն էլ է հավելվել «Խումհա-

րի» «Կենդանին և մեռյալը» տարբերակում: Այս սցենարական հայտը համարենք մանրամաս կամ մանրադեպ, որ տեղ է գտել վիպակի ամբողջական հյուսվածքում, թվում է՝ մերվել, ամբողջության մաս է կազմել, սակայն ըստ էության չի կորցրել իր հարաբերական ինքնուրույնությունը. ողբերգություն է ավելի մեծ ողբերգության մեջ, մարդկային ճակատագրի բացահայտում: Ինչքան էլ Հր. Մաթևոսյանը համառորեն շեշտեր, որ ժամանակը աղքատ էր, սակայն հեղինակային տեսողությունն ու զգայնությունը և գիր արարելու հեղինակային կարողությունն այդ աղքատ ժամանակը հարստացնում են մարդկայինով:

Մյուս կողմից կարևորվում է Հր. Մաթևոսյանի դիտարկումը՝ կապված «Խումհար» վիպակի հետ. «<...> նա <Արմենակ Մնացականյանը> հուսահատորեն ձգտում է պահպանել իր ներքին «ալխոյանմանությունը», դիմակայում է մեծ քաղաքի ու իր «քաղցր կյանքի» գայթակղություններին» [17, 210]: Նկատենք, որ «Պատիժը» երկից ածանցված պատմությունը որպես հակադրույթ է ներկայացվում «Գիշերը» ֆիլմին և «մարդը մենակ է» կարգախոսին: Համադրություններով գրելու մաթևոսյանական նախասիրությունը փոխարինվում է հակադրություններ ձևավորելու սկզբունքով, երբ իրար են հակադրվում մեծ քաղաք-քաղցր կյանքն ու պատերազմական-հետպատերազմական դժվար կյանքը, «մարդը մենակ է» և «մարդը մարդով է մարդ» կարգախոսները: «Պատիժը» երկի՝ որպես հայտ ներկայացված այս տարբերակը իր ալխոյանմանությունը պահպանելու խնդրառությունն ունի, միաժամանակ սա հիշողության պահպանության խնդիր է արծարծում:

5. «Ծերունու կինը մեռել էր, մտքով ու մարմնով լիովին առողջ ծերունին գերեզմանոցում, ժողովրդի մեջ, կնոջը խոսք տվեց, իսկական հավատացյալի խոսք տվեց պառավին, թե ինքը նրան մենակ չի թողնի այդ ցուրտ ու մենակ աշխարհում, ինքը մի քանի օրից կգնա նրա մոտ, թող նա մի քանի օր համբերող ու ներող լինի: Եվ ծերունին հաց չկերավ, պատասխանեց թե «Եզը որ եզ է, եզան ընկերոջը երբ մի բան է պատահում, եզը բառաչում է, դեսուդեն է նայում, տխրում է, մզզացնում է...»: <...> «Բա մենք մարդ ենք, չէ,

մենք բա մի եզան չափ էլ չկա՞նք»: Ծերունին հյուծվեց, հանգիստ պառկեց ու մեռավ: Պառկեց ու մեռավ... Գեղեցիկ այգի ունի, պտտվում է խնձորենիների, արևածաղիկների, մեղվանոցի մեջ և հաց չի ուտում, իբր թե խռովել է տնեցիներից, սուտ խռովել է, որպեսզի չստիպեն հաց ուտել... Չստիպեն հաց ուտել...» [3, 406-407]:

Այս պատմությունն էլ մի շարք անգամներ տեղ է գտել Հր. Մաթևոսյանի ստեղծագործության մեջ, ոչ միայն «Խումհար» վիպակում, այլև «Մենք ենք, մեր սարերը» [12, 67 և 7, 98], «Հաղարծին» վիպակներում: Այն թերևս դառնալու էր «Հաղարծին» վիպակի եզրափակող հատվածը [10, 399], որ այդպես էլ չգրվեց: Դիտարկման համար հիմք են վիպակի առաջին էջին հիշատակվող վերնագրերի տարբերակներից մեկը՝ «Սարգիս Դարբինյան», և Հ. Սահյանից որպես բնաբան ենթադրված հատվածը՝ «Թող ծանրանամ հոգսի բեռով... // Կյանքի վրա ոչ մի օրով չծանրանամ, չծանրանամ... // Չծանրանամ, չծանրանամ»: Ահնիձորի տարիքավոր մարդիկ դեռ հիշում են Սարգիս Դարբինյանին. ինքը և կամավոր մահը կենսական իրողություններ են եղել: Ուրիշ անգամ անդրադարձել է հարցազրույցում՝ կարևորելով բարոյական ու հոգեբանական այլ ազդակներ. «Հիշողության մեջ ամրագրվածը գեղարվեստական ստեղծագործության մեջ շատ տարբեր է մեկնաբանվում: Շատ վաղուց էի լսել այն ծերունու մասին, որ կնոջ հուղարկավորության ժամանակ ասել էր, թե ինքն էլ քսան օրից կմեռնի և իրոք մահացել էր: Հպանցիկ, հընթացս, այլ՝ հակադիր բնավորությունն ընդգծելու համար այդ մասին ասվել է «Մենք ենք, մեր սարերը» վիպակում: Ինչպես լսել եմ, այնպես էլ գրել եմ: Բայց այդ ծերունին արդեն քսան տարի ապրում է իմ մեջ, և այն վեպում, որ հիմա գրում եմ, այդ պատմությունն անսպասելի զարգացում է ստանում բարոյական ու հոգեբանական առումով» [4, 240]: Քսան տարի ապրած պատմությունը արդեն իսկ շարունակական հիշողության, այդ հիշողության համար տագնապի արտահայտություն է:

6. «Գառնիի կապույտ որձաքարը աշնան պարզ օրվա մեջ, խշխշացող ընկույզը դիմացի սարերը սարերի վրա, տապալված սյան վրայից մի ուլ ցատկեց, ընկուզենիները խաղա՛ղ, խաղաղ էին,

կողոպտված վազերը թռչուններից ու երեխաներից դեռ թաքցնում էին սև խաղողի մի երկու ողկույզ, արևի ալիքներն ու վայրկյանները համրելով քողտիկի դռանը կարմրում էր տաքդեղի շարունկը, ժամանակն այդ հավերժության հետ ապրում էր առանց կռվի, հաշտ ու ջերմ» [3, 378]: Զուգորդությունների որոշակի աստիճանում ձևավորված պատկերը գեղարվեստական է ու կինոմատոգրաֆիական, և այս պատկերը էջեր անց շարունակվելու է՝ ձևավորելով յուրահատուկ սցենարական հայտ. «Զոհաբերվող ցլիկի արյան համ զգացի <...> ինձ դուր եկավ ցլիկի զոհաբերման պատկերը, որձաքարե տաճար, հարավային աշուն, տրորվող խաղող, ցորնաթուխ տղաներ, ձգված ձիեր աշնան արևի մեջ և դանակի կարծր շեղբ» [3, 402]:

Սակայն այս պատկերն էլ իրեն նախորդած գրական հիմք ունի, որ տեղ է գտել «Հաղարծին» անավարտ վիպակում. «<...> ես դիտում էի վանքը, և վանքը հոյակապ էր: Զանգերը թող երգեին: Թող երգեին խուլ՝ ինչպես ոսկիները գորգի վրա: Աբեղան թող նայեր անտառին, նայեր և չհասկանար, որ ինքը շնչում է և չտեսներ անտառը: Վանքի կովը գար, կանգներ իր հորթի կողքին, և աղջամուղջի մեջ նայեին, չտեսնեին ու սպասեին: Եվ թարթեին իրենց աչքերը: Աբեղան դեռ նայելիս լիներ: Ձեթի կարմիր լույսի մեջ, քարե սրահում քարե մեծ սեղանին, քարի պես չոր հացի շուրջ, վանահայրն օրհներ ընթրիքը, և օրհնության նրա ձայնը մեղմ լիներ՝ ձեթի այրման ձայնին հավասար: Ամաչելով հաց վերցնող իրենց ձեռքերից և ձեռքները թաքցնելով սև թևքների մեջ, ամաչելով հաց ծամող իրենց բերաններից և գլուխները խոնարհելով, ամաչելով նրանից՝ ում որ իրենք ուտում էին և աչքները գոցելով՝ վանական եղբայրությունը քարե մեծ սեղանի շուրջ թող գոյեր որպես Աստծու քար, Աստծու ծառ, Աստծու խոտ: Եվ դանդաղ, ինչպես ածուխն է դառնում աղամանդ, ժամանակի մեջ քարե սեղանից, օրհնությունից, ձեթի այրումից, կովի նայվածքից, զանգերի երգից, վանահոր գերեզմանից թող առաջանար ու հառներ Մեծ Իմաստը: Եվ վանքի մոտ թող ղողանջեր զբոսաշրջիկների լուսավոր ավտոբուսը, և բացազդր աղջիկները թող ծիծաղեին զկեռի ծառի մոտ: Վանքն,

այո, հոյակապ էր: Քարերն, այո, իրենց տիեզերական խլության մեջ յոգորեն ներհայելով դանդաղ ապրում էին իրենց երկար մահը: Սուրը գոգին՝ Թեմուրլանգը թող նստեր խաչքարին և նայեր, և նրա հայացքն այստեղ չլիներ, գիշանգղի նրա հայացքը նրա մտքի հետ ճախրելիս լիներ հեռու տափաստանների վրա: Նրա հայացքն ու միտքը թող հոգնեին և, նրա մարմնի հետ, թառեին վանքի դիմաց խաչքարին, և Թեմուրլանգն անդրադառնար՝ որ ինքն այստեղ է՝ խաչքարին՝ վանքի դիմաց, և դա, այո, վանք է: Աչքերը կկոցեր ու նայեր: Դեմքի արտահայտությունը փոխեր ու նորից նայեր: Խաչքարին, անհանգիստ, շտկվեր ու դարձյալ նայեր: Ուսը, հարցական, թոթվեր և այդ պահին անշարժանար՝ կարծելով հասկանում է: Եվ նրա միտքը, ինչպես ճնճղուկն ապակուն, բախվեր և ընկրկեր, բախվեր և դարձյալ ընկրկեր՝ չզորելով թափանցել վանքի հղկված պատերի իմաստից ներս: Գեղեցիկ է, ասեր Թեմուրլանգը, գեղեցիկ է, ասեր և տրորեր կաղ ոտքի ծունկը՝ որպեսզի իրեն ցավ պատճառի՝ որպեսզի, ցավի հետ, իր մեջ արթնանա այդ վանքի իմաստը կոտրելու և միջուկը տեսնելու կարողություն: Նրա մեջքը հրելով՝ քաղխորհրդի ճարտարապետ տղաները խաչքարի վրայից նրան վեր կացնեին և խաչքարը բարձրացնեին բեռնատար ավտոմեքենա» [10, 219-221]: Սա մի կողմից հուշում է «Հաղարծին» և «Խումհար» վիպակների ուղղակի կապի և ծագումնաբանության մասին, մյուս կողմից փաստում է ստեղծագործության այն հոգեբանական ելակետը, որ արձանագրվել է Հր. Մաթևոսյանի հարցազրույցներից մեկում. «Ամենահոխորտուն տարիքում <...> դեպի վաղը չես նայում. մտածում ես ծիածանագույն հեռուների, անցյալի նոստալգիական կանչերի մասին՝ քրոնիկոնների գեղեցկությունը հմայում է. մի խոսքով՝ հեշտ հաղթահարելիին ես գնում» [4, 102]: Ոչ սթափ-ոչ արբած, ոչ գյուղացի-ոչ քաղաքացի, ոչ գրող-ոչ սցենարիստ, ու դեռ չես արել քո գործը, այլ միջանկյալ՝ խումհարային վիճակում ես: Սա է պատճառը, որ «հեշտ հաղթահարելիին ես գնում»: Մյուս կողմից չափազանց էական է թվում Արմենի և Եվայի զրույցի այն հատվածը, որ նախնական տարբերակում չկար և այնուհետ է հավելվել բնագիր. «Բայց ես ինչքան իմ չընկեր-հակակիրներից,

էդքան էլ իմ ընկեր-համակիրներից եմ վախենում: Կարծում են քեզ հասկացան, խոսքը բերանիցդ խլում ու դեպի հիմարություն են քշում: Ինչը քեզ համար թանկ էր՝ էժանացնում, հասարակացնում, ծամած ծամոն են դարձնում ու թքում» [3, 369]: Ապա և, կապված Բերգմանի ֆիլմը դիտելու հետ, հավելում է. «Բայց ոչ մի անգամ ես չեմ նայի, որպեսզի չտեսնեմ, թե ինչպես են ոչինչ չստեղծող անարժանները փառավորապես լափում հանճարի միտքն ու սիրտը:

– Դե նա ստեղծել է՝ որ նայենք: Ի՞նչ անենք, չնայե՞նք:

– Իսկ մենք իրեն ի՞նչ ենք տվել» [3, 370]:

Հանճարի բանականությամբ ու զգացմունքներով արարված գործին գնահատական են տալիս ոչինչ չստեղծող(ած)ները, այնինչ արբում են նրանց արարում-խնջույքին նրանց իսկ «ալկոհոլով՝ դրսևորելով «խուհարային սինդրոմ»: Հոգեբանական այս վիճակի ծնունդ են վիպակներից քաղաբերված «սցենարական հայտերից» մի քանիսը:

7. «Ոտքի վրա» ներկայացվող սցենարական հայտ է «Նկարչուհի և նկարիչը», որ թերևս ոչ թե տագնապի արտահայտություն է, այլ արվեստի խնդիր արծարծող պատկեր, որ հակադրվում է Արմեն (Գևորգ) Մնացականյանի ապրածին. «Նկարչուհի է, գուցե շատ տաղանդավոր, պինդ աշուն է ու յուղաներկի հոտ: Ամուսինը լավ տղա է, ասենք ինժեներ: Ամուսինը նրան հացուերշիկ է տալիս, սուրճ է եփում, բայց ինժեներ է, այսինքն այլ գործի է: Ինքն էլ պինդ աղջիկ է, ճորտի պես կարող է չարչարվել: Ընկերները նկարիչներ են, նկարիչները լավ ժողովուրդ են: <...> Քսում է, քսում է, քսում է՝ չի հավանում: Քերում է: Չլվացված, չսանրված, քաղցած՝ քսում է: Ամուսնու կարծիքով նկարն այդպես էլ լավ է: Հը՞,– մտամոլոր արձագանքում է ամուսնուն: Ավարտված գործ է, ասում է ամուսինը, հաց ուտենք, դուրս գանք, ուզո՞ւմ ես ռեստորան գնանք:- Մի խանգարիր,– ասում է ամուսնուն, քսում է, քսում է, քսում է... Հիմնականը լավ է ստացվել. ասենք՝ պառկած կին է, անդորր է. պատին լինելու է ցատկող վագր կամ, լուսամուտից դենը, ծառ, կամ, պատին՝ խաչելության նկար, կամ թե չէ գորգի նախշեր՝ եղջերու, թռչուն, միրգ – մեռնելու կամ մեռնելու չափ հանգիստ լինելու ցանկություն:

Քսում է, քսում է, քսում է... Այդ ժամանակ գալիս է նկարիչ ընկերներից մեկը: «Էս ի՞նչ բանի ես, ախչի... լավ բանի ես... էդ սևն էդտեղից քերենք տեսնենք. էդ լուսամուտը չփակե՞նք. փակիր՝ նայենք. պատին իսկի ի՞նչ ես գրել[4]. վագրն ինձ դուր չի գալիս, քե՞զ: Քրիստո՞ս, եսի՞մ»: Ամուսինը ձանձրանում ու տնից ելնում է, իսկ այդ երկու խելագարը գույն են դնում, գույն են վերցնում, ներկոտվում են, ուժասպառ են լինում: Ամուսինը տուն է գալիս՝ նկարն ավարտված կամ կիսատ է, նրանք նստած են նույն թախտին, նա խաղում է նրա մազերի հետ, իրենց էսպերանտոյով բաներ են ասում ու ծիծաղում և չեն հասկանում ամուսնու շփոթմունքն ու կատաղությունը: Ամուսնուն նայում են հեռու մի աշխարհից: Ո՞վ է նա, ի՞նչ է ուզում, ի՞նչ է պատահել» [3, 392-393]:

Արմենի և Եվայի զրույցի ընթացքում այնուհետ երևակվում է հեղինակի (ու կերպարի) վերաբերմունքն իր իսկ պատմածին. «Ամեն ինչ այնքա՛ն դատարկ, անարու, փուչ ու հիմար թվաց, ես ինձնից այնպե՛ս զզվեցի» [3, 394]: Իսկ դժվար չի թվում գյուղական դժվար խոտհունձը: Դժվար կյանքի ու արվեստ խաղալու այս հակադրությունը նույնպես «խումհարային սինդրոմի» արտահայտություն է, որ ենթադրում է ընտրություն:

8. Արվեստի հետ կապված խնդիրների ուղղորդմանն է ուղղված պայմանականորեն «Քննիչ կին և քննվող տղամարդ» սցենարական հայտը, որ Արմեն Մնացականյանը «ներկայացնում է» Եվա Օզերովային. «Քննիչ և քննվող: Քննիչը կին է, համազգեստ է հագել, նայում է սառը հանգստությամբ, մեջը կին չկա: Գեղեցկուհի է և կին չէ: Քննվողը տղամարդ է, մինչև հետաքննության վերջը այդ քննիչի մեջ նա կին է արթնացնելու: <...> Ամենևին էլ գռեհկաբանություն չի, հուզիչ պատմություն է ցամաքող մայրության և արթնացող մայրության մասին, նույնիսկ շատ հուզիչ» [3, 410]:

---

[4] «Գրել» բառն է նաև Երկերի երկրորդ հատորում [6, 182], իսկ «Ծառերը» ժողովածուի մեջ [7, 95] և «Հատընտիրի» առաջին հատորում [8, 644]՝ «Դրել» բայը: Թերևս նախընտրելին երկրորդն է: Ինչ վերաբերում է ամսագրային հրատարակությանը, ապա տեսնում ենք ոչ միայն «դրել» բառը, այլև մեծ ու փոքր բազմաթիվ այլ տարբերություններ [1, 43-44]:

Այս հատվածի զուգահեռումը ամսագրային հրատարակության համապատասխան տարբերակի հետ բացահայտում է մեծ ու փոքր բազմաթիվ տարբերություններ [1, 49-50], որոնք վկայում են վիպակը հիմնովին խմբագրելու հանգամանքը: Թեման բազմիցս արծարծվել է մասնավորապես կինոյում: Ըստ էության այն նկատելի հետագիծ չունի մաթևոսյանական բնագրում և չի բնորոշում այդ բնագիրը որևէ էական հատկանիշով, քանի որ Մաթևոսյանն այլ քրոնոտոպում է տեսնում իր ասելիքի իրացումը, «ցամաքող մայրության և արթնացող մայրության», ավելի շուտ «արթնացող իգության» և «կայացած վերարտադրության» իրողությունները կան հեղինակի «Տաշքենդ», «Տերը», «Տախը» երկերում, չգրված, սակայն ծրագրված «Անառակը» վեպին վերաբերող գրառումներում:

Այսպիսով՝ Հր. Մաթոսյանի «Խումհար» վիպակից պայմանականորեն զատված «սցենարական հայտերը» ոչ միայն բնութագրական են գլխավոր կերպար Արմեն (Գևորգ) Մնացականյանի կերպարի համար, նրա հոգեբանության ու աշխարհընկալման ցուցիչներից են, այլև բացահայտում են հեղինակին ու նրա տագնապները: Տեղին է հիշել Արմեն Մնացականյանի խոսքի պատառիկը՝ ուղղված Իվան Վաքսբերգին. «<...> իմ խղճի, իմ վերաբերմունքի, իմ մասին է խոսքը» [3, 349]: Հր. Մաթևոսյանի պահպանած ու մեզ փոխանցած սարոյանական խոսքը՝ «նյութը ես եմ, քանի ես կամ, բառի համար նյութ կա» [4, 282], վերաբերում է նաև Մաթևոսյանին. ինքն է դառնում իր գրականության նյութը. «պարզվում է, որ իրականությունը չէ գրականության օբյեկտը, այլ ինքը՝ գրողն է» [4, 504]:

Եվ միևնույն ժամանակ այս պայմանականորեն հայտ անվանված հատվածները ոչ միայն բացահայտում են հեղինակին, այլ նաև անվանում են ժամանակը, բացահայտում այդ ժամանակի տագնապները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Северская О. Информационная структура поэтического высказывания // Филологические науки, № 6, 2008.
2. Մաթևոսյան Հր., Խումհար, «Սովետական գրականություն», 1970, թիվ 9:
3. Մաթևոսյան Հր., Վիպակներ, Երևան, «Նաիրի» հրատ., 1990:
4. Մաթևոսյան Հր., Ես ես եմ, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2005:
5. Քառյան Ս., Փոքր եղբոր իրավունքով, «Մաթևոսյանական արձագանքներ-2», Վանաձոր, 2011:
6. Մաթևոսյան Հր., Երկեր երկու հատորով, հտ. 2, Երևան, «Սովետական գրող», 1985:
7. Մաթևոսյան Հր., Ծառերը, Երևան, «Սովետական գրող», 1985:
8. Մաթևոսյան Հր., Հատընտիր, հտ. առաջին, Երևան, «Օգոստոս», 2005:
9. Մաթևոսյան Հր., Տերը, Ե., «Սովետական գրող», 1983:
10. Մաթևոսյան Հր., Անտիպներ, հտ. 1, Երևան, «Հրանտ Մաթևոսյան բարեգործական հիմնադրամ», 2017:
11. Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1968:
12. Մաթևոսյան Հր., Օգոստոս, Երևան, «Հայաստան» հրատ., 1967:
13. Փիլոյան Վ., Այսօր և միշտ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2023:

СЦЕНАРНЫЕ ЗАЯВКИ-ТРЕВОГИ В ПОВЕСТИ ГРАНТА МАТЕВОСЯНА «ПОХМЕЛЬЕ»

Валерий Пилоян

Резюме

Ключевые слова: *Грант Матевосян, кинодраматургия, чувство времени, проблемы реальности, искусство и действительность, психология литературного произведения и автора*

Литературное произведение предельно информативно и сообщает читателю многое о писателе и его сочинении. Не исключением является повесть Г. Матевосяна «Похмелье», в структуре которой можно увидеть как вставные истории, так и избранные фрагменты из собственных трудов, сведения, почерпнутые из прессы, «отредактированный» пересказ содержания кинофильма, которые все вместе можем охарактеризовать как «тревоги» и «проблемы». Они часто встречаются в произведениях Г. Матевосяна и раскрывают обстоятельства духовной концентрации автора и манифестации сказанного. Важно, что эти тревоги сохраняют не только память о времени в деталях, в событиях реальности, но и культурную память времени, цель которой не только возвестить о моральной нечистоплотности, но и полностью отвергнуть ее. Существенным фактом в произведении Г. Матевосяна становится устранение несправедливости и дисгармонии. Условно выделенные «сценарные декларации» из повести Г. Матевосяна «Похмелье» не только характеризуют главного героя, его психологию и мировосприятие, но прежде всего вскрывают внутренний мир автора и его тревожное состояние, дают название отрезкам времени и разоблачают кризис этого времени. Статья представляет анализ восьми «сценарных деклараций», выделенных из повести, которые раскрывают ощущения автора в процессе написания и переработки повести.

SCENARIO ALARM REQUESTS IN HRANT MATEVOSYAN'S STORY "HANGOVER"

Valery Piloyan

Summary

Key words: *Hrant Matevosyan, film dramaturgy, sense of time, problems of reality, art and reality, psychology of the literary work and the author*

Literary works are very detailed and give much insight into the writer's work. The literary work is an extremely informative piece of writing with much insight into the writer's work. The story "Hangover" by H. Matevosyan is not an exception. Here one can see both inserted stories and selected fragments from H. Matevosyan's own works, information gathered from the press and an "edited" retelling of a film plot, all of which can be characterized as "anxieties" and "problems". They are often found in the works of H. Matevosyan and reveal the circumstances of the author's spiritual concentration and the manifestation of what was said. It is important that these anxieties preserve not only the memory of the time in detail, in the events of reality, but also the cultural memory of the time, the purpose of which is to announce moral uncleanness, as well as to completely reject it. The elimination of injustice and disharmony becomes a significant fact in H. Matevosyan's work. The tentatively selected "script declarations" from the story "Hangover" not only symbolize the main character, his psychology and worldview, but above all reveal the inner world of the author and his restless state, specify the segments of time and expose the crisis of the time. The article presents an analysis of eight "script declarations" selected from the story, which reveal the author's feelings in the process of writing and rewriting the story.

КРАТКИЕ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ СТАТЕЙ

Авагян Элла Суреновна
Кандидат филологических наук, доцент
Доцент кафедры немецкого языка
Государственный университет имени В.Я.Брюсова (Ереван, Армения)

Амбарцумян Наира Валерьевна
Кандидат филологических наук, доцент
Старший научный сотрудник
Институт литературы имени Манука Абегяна НАН РА
(Ереван, Армения)

Арустамян Карине Смбатовна
Кандидат филологических наук, доцент
Доцент кафедры иностранных языков и литературы
Ванадзорский государственный университет имени О. Туманяна
(Ванадзор, Армения)

Асатрян Сусанна Паргевовна
кандидат педагогических наук, доцент
Доцент кафедры педагогики и методики преподавания языков
Государственный университет имени В.Я.Брюсова (Ереван, Армения)

БадуеваГунсэмаЦыдыповна
кандидат филологических наук, доцент
Доцент кафедры русской и зарубежной литературы
ФГБОУ ВО «Бурятский государственный университет имени Доржи Банзарова» (Улан-Удэ, РФ)

Брутян Лилит Георгиевна
Доктор филологических наук, профессор
Зав. кафедрой русского языкознания, типологии и теории коммуникации
Ереванский государственный университет (Ереван, Армения)

Гоголадзе Тамар Ахмедионовна
доктор филологических наук
профессор факультета гуманитарных наук
Горийский государственный педагогический университет
(Гори, Грузия)

Григорян Анаит Генриковна
Преподавательница начальных классов
Ереванская основная школа № 82 (Ереван, Армения)
Даниелян Тарон Рудольфович
Кандидат филологических наук, доцент
Доцент кафедры армянского языка и литературы
Ванадзорский государственный университет имени О. Туманяна (Ванадзор, Армения)
Джагинян Нина Александровна
Кандидат филологических наук, доцент
Доцент кафедры иностранных языков и литературыВанадзорский государственный университет имени О. Туманяна (Ванадзор, Армения)
Донгак Антонина Саар-ооловна
Кандидат филологических наук
Тувинский институт гуманитарных и прикладных социально-экономических исследований (Кызыл, РФ)
Ведущий научный сотрудник
Закарян ОваннесЛевонович
Кандидат филологических наук, доцент
Научно-образовательный комплекс «Татев» (Ереван, Армения)
Руководитель сектора языкознания
Маденян Лариса Арамаисовна
кандидат педагогических наук, доцент
доцент кафедры русского языка и литературы
Ширакский государственный университет им. М. Налбандяна (Гюмри, Армения)
Макаровска Ольга Рудольфовна
кандидат гуманитарных наук, доцент
Университет имени Адама Мицкевича (Познань, Польша)
Мшвидобадзе Тинатин Ясоновна
Доктор технических наук, профессор
Горийский государственный университет (Гори, Грузия)
Никонова Наталья Егоровна
Доктор филологических наук, профессор
Зав. кафедрой романо-германской филологии
Томский государственный университет (Томск, РФ)

Пенева Наталия Димитрова
Кандидат филологических наук, доцент
Доцент кафедры русистики
Великотырновский университет им. Кирилла и Мефодия
(Велико-Тырново, Болгария)
Пилоян Валерий Альбертович
Кандидат филологических наук, доцент
Доцент кафедры армянского языка и литературы
Ванадзорский государственный университет имени О. Туманяна
(Ванадзор, Армения)
Погосян Наира Вазгеновна
кандидат педагогических наук, доцент
Доцент кафедры педагогики и методики преподавания языков
Государственный университет имени В.Я.Брюсова (Ереван, Армения)
Саргсян Элла Артаковна
Преподаватель кафедры иностранных языков и литературы
Ванадзорский государственный университет имени О. Туманяна
(Ванадзор, Армения)
Серягина Юлия Сергеевна
Кандидат филологических наук, доцент
Томский государственный университет, Томск (РФ)
Тадевосян Тадевос Вруйрович
Кандидат филологических наук, доцент
Зав. кафедрой иностранных языков и литературы
Ванадзорский государственный университет имени О. Туманяна
(Ванадзор, Армения)

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առուստամյան Կարինե Սմբատի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան
(Վանաձոր, ՀՀ)

Ասատրյան ՍուսաննաՊարզևի
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (Երևան, ՀՀ)

Ավագյան Էլլա Սուրենի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գերմաներեն լեզվի ամբիոնի դոցենտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (Երևան, ՀՀ)

Բադուևա Գունսեմա Յիդիպի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռուս և արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ
Բուրյաթիայի Դորժի Բանզարովի անվան պետական համալսարան
(Ուլան-Ուդե, ՌԴ)

Բրուտյան Լիլիթ Գեորգիի
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուս լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցության
տեսության ամբիոնի վարիչ
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

Գրիգորյան Անահիտ Հենրիկի
դասվար
Երևանի թիվ 82 հիմնական դպրոց (Երևան, ՀՀ)

Գոգոլաձե Թամար Ախմեդիոնի
Բանասիրական գիտությունների դոկտոր
Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պրոֆեսոր
Գորիի պետական մանկավարժական համալսարան
(Գորի, Վրաստան)

Դանիելյան Տարոն Ռուդոլֆի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)

Դոնգակ Անտոնինա Սաար-օօլի
բանասիրական գիտությունների թեկնածու
Առաջատար գիտաշխատող
Տուվայի հումանիտար և կիրառական սոցիալ-տնտեսական հետազոտությունների ինստիտուտ (Կըզըլ, ՌԴ)

Զաքարյան Հովհաննես Լևոնի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
«Տաթև» գիտակրթական համալիր (Երևան, ՀՀ)
Լեզվաբանության բաժանմունքի ղեկավար

Թաղևոսյան Թաղևոս Վրույրի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)

Համբարձումյան Նաիրա Վալերիի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ավագ գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

Մադենյան Լարիսա Արամայիսի
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան (Գյումրի, ՀՀ)

Մակարովսկա Օլգա Ռուդոլֆի
Հումանիտար գիտությունների թեկնածու, դոցենտ
Ադամ Միցկևիչի Համալսարան (Պոզնան, Լեհաստան)
Մշվիդոբաձե Թինատին Յասոնի
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գորիի պետական համալսարան (Գորի, Վրաստան)
Նիկոնովա Նատալյա Եգորի
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի վարիչ
Տոմսկի պետական համալսարան (Տոմսկ, ՌԴ)
Պեննա Նատալիա Դիմիտրի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռուսագիտության ամբիոնի դոցենտ
Կիրիլի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարան (Վելիկո Տիռնովո, Բուլղարիա)
Պողոսյան Նաիրա Վազգենի
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (Երևան, ՀՀ)
Ջաղինյան Նինա Ալեքսանդրի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)
Սարգսյան Էլլա Արտակի
Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)
Սերյագինա Յուլյա Սերգեյի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Տոմսկի պետական համալսարան (Տոմսկ, ՌԴ)
Փիլոյան Վալերի Ալբերտի
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)

BRIEF INFORMATION ABOUT THE AUTHORS OF THE ARTICLES

Arustamyan Karine
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Foreign Languages and Literature
Vanadzor State University named after H. Tumanyan (Vanadzor, Armenia)

Asatryan Susanna
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Pedagogy and Methods of Teaching Languages
State University named after V. Bryusov (Yerevan, Armenia)

Avagyan Ella
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of German Language
State University named after V. Bryusov (Yerevan, Armenia)

Badueva Gunsema
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Russian and Foreign Literature
Buryat State University named after Dorzhi Banzarov
(Ulan-Ude, Russian Federation)

Brutyan Lilit
Doctor of Philological Sciences, Professor
Chair of Russian Linguistics, Typology and Communication Theory
Yerevan State University (Yerevan, Armenia)

Gogoladze Tamar
Doctor of Philological Sciences
Professor of the Faculty of Humanities
Gori State Pedagogical University (Gori, Georgia)

Grigoryan Anahit
Primary School Teacher
Yerevan Basic School № 82 (Yerevan, Armenia)

Hambardzumyan Naira
Candidate of Philological Sciences, Associate Professor
Senior Researcher
Institute of Literature named after ManukAbeghyan of NAS RA
(Yerevan, Armenia)

Danielyan Taron
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Armenian Language and Literature
Vanadzor State University named after H. Tumanyan (Vanadzor, Armenia)

Dongak Antonina
Candidate of Philological Sciences
Tuva Institute for Humanitarian and Applied Socio-Economic Research (Kyzyl, Russian Federation)
Leading Researcher

Jaghinyan Nina
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Foreign Languages and Literature
Vanadzor State University named after H. Tumanyan (Vanadzor, Armenia)

Madenyan Larisa
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Russian Language and Literature
Shirak State University named after M. Nalbandyan (Gyumri, Armenia)

Makarowska Olga
Candidate of Humanities, Associate Professor
Adam Mickiewicz University (Poznan, Poland)

Mshvidobadze Tinatin
Doctor of Technical Sciences, Professor
Gori State University (Gori, Georgia)

Nikonova Natalya
Doctor of Philological Sciences, Professor
Chair of the Department of Romano-Germanic Philology
Tomsk State University (Tomsk, Russian Federation)

Peneva Natalia
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Russian Studies
Veliko Tarnovo University named after Cyril and Methodius
(Veliko Tarnovo, Bulgaria)

Piloyan Valery
Candidate of Philological Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Armenian Language and Literature
Vanadzor State University named after H. Tumanyan (Vanadzor, Armenia)

Poghosyan Naira
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor
Associate Professor of the Chair of Pedagogy and Methods of Teaching Languages
State University named after V. Bryusov (Yerevan, Armenia)
Sargsyan Ella
Lecturer at the Chair of Foreign Languages and Literature
Vanadzor State University named after H. Tumanyan (Vanadzor, Armenia)
Seryagina Yulia
Candidate of Philological Sciences, Associate Professor
Tomsk State University (Tomsk, Russian Federation)
Tadevosyan Tadevos
Candidate of Philological Sciences, Associate Professor
Head of the Chair of Foreign Languages and Literature
Zakaryan Hovhannes
Candidate of Philological Sciences, Associate Professor
Scientific and educational complex "Tatev" (Yerevan, Armenia)
Head of the Linguistics Sector

СОДЕРЖАНИЕ

ЛИНГВИСТИКА И МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ ЯЗЫКА

Элла Авагян
Способы выражения модальности на
семантико-синтаксическом уровне в немецком языке 8

Карине Арустамян
Семантические приращения цветоназваний «оранжевый»
в художественном тексте 20

Сусанна Асатрян, Наира Погосян
Развитие критического и креативного мышления учащихся в процессе
обучения английскому языку 34

Лилит Брутян
Русские комплименты В межкультурном пространстве 49

Анаит Григорян
Интегрированное обучение слов, выражающих число,
в начальных классах 62

Нина Джагинян
Лингвостилистический анализ коротких рассказов
Шервуда Андерсона 75

Оганнес Закарян
Этимология нескольких армянских слов
со значениями «скользить», «нырять» и т.д. 89

Лариса Маденян
О лингводидактической ценности учебного словаря 105

Ольга Макаровска
К вопросу об определении понятий «текстовая картина мира» и
«языковая картина текста» 118

Тинатин Мшвидобадзе
Эффективность инструментов переводческих технологий
в межкультурной коммуникации 130

Наталия Пенева
Сопоставительная характеристика назальных сонантов [м], [м’]
в русском и болгарском языках 138

Элла Саргсян
Концепт «хлеб»: сравнительный анализ идиоматических выражений во французском и английском языках.....148

Тадевос Тадевосян
Урбаноним «Ротонда» в ономастическом и культурном пространстве Большой Каракилисы (современный г. Ванадзор).....158

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Наира Амбарцумян
Феномен Вечного Странника в сборнике Ваге Ошакана «Перекресток»: семантические и хронологические взаимопроникновения 179

Гунсэма Бадуева
Образ соседей в прозе Б. Екимова.....191

Тамар Гоголадзе
Поэт сквозь призму быта: А. Блок и Г. Табидзе 201

Тарон Даниелян
Творческая деятельность священника Хорена Ханзадяна.....208

Антонина Донгак
Тувинский фольклор и буддизм 219

Наталья Никонова, Юлия Серягина
Немецкая женская проза в периодике Российской империи: переводы рассказов Габриэле Рейтер 237

Валерий Пилоян
Сценарные заявки-тревоги в повести Гранта Матевосяна «Похмелье» 254

КРАТКИЕ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ СТАТЕЙ.....272

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Էլլա Ավագյան
Եղանակավորման արտահայտչամիջոցները ժամանակակից գերմաներենում իմաստաշարահյուսական մակարդակում 8

Կարինե Առուստամյան
«Նարնջագույն» գունանվան իմաստային ընդլայնումը գեղարվեստական տեքստում 20

Սուսաննա Ասատրյան, Նաիրա Պողոսյան
Աշակերտների քննական և ստեղծարար մտածողության զարգացումն անգլերենի ուսուցման գործընթացում 34

Լիլիթ Բրուտյան
Ռուսերեն հաճոյախոսությունները միջմշակութային տարածքում 49

Անահիտ Գրիգորյան
Թվային հասկացություն արտահայտող բառերի ինտեգրված ուսուցումը տարրական դասարաններում 62

Նինա Ջաղինյան
Շերվուդ Անդերսոնի կարճ պատմվածքների լեզվառճական քննություն 75

Հովհաննես Ջաքարյան
«Սահել», «սուզվել» և այլ իմաստներով մի քանի բառերի ստուգաբանություն 89

Լարիսա Մադենյան
Ուսումնական բառարանի լեզվաբանական արժեքի մասին 105

Օլգա Մակարովսկա
«Աշխարհի տեքստային պատկեր» և «տեքստի լեզվական պատկեր» հասկացությունների սահմանման հարցը 118

Թինատին Մշվիդոբաձե
Թարգմանչական տեխնոլոգիական գործիքների արդյունավետությունը միջմշակութային հաղորդակցության մեջ 130

Նատալիա Պեննա
[Մ], [մ’] ձայնորդների համեմատական բնութագրերը ռուսերեն և բուլղարերեն լեզուներում 138

Էլլա Սարգսյան
«Հաց» հասկացությոթը ֆրանսերեն և անգլերեն իդիոմատիկ արտահայտություններում. համեմատական վերլուծություն.....148

Թաղևոս Թաղևոսյան
«Ռոտոնդա» ուրբանոնիմը Մեծ Ղարաքիլիսայի (այժմյան Վանաձոր) հատկանվանագիտական և մշակութային տարածությունում.....158

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նաիրա Համբարձումյան
Հավերժական ճամփորդի ֆենոմենը
Վահե Օշականի «Քառուղի» ժողովածուում.
Իմաստաբանական և ժամանակային փոխներթափանցումներ.....179

Գունսեմա Բաղունա
Հարևանների կերպարը Բ. Եկիմովի արձակում.....191

Թամար Գոգոլաձե
Բանաստեղծը կենցաղի լույսի ներքո. Ա. Բլոկ և Գ. Տաբիձե.....201

Տարոն Դանիելյան
Խորեն քահանա Խանզադյանի
ստեղծագործական գործունեությունը.....208

Անտոնինա Դոնգակ
Տուվայական բանահյուսությունը և բուդդիզմը.....219

Նատալյա Նիկոնովա, Յուլիա Մերյագինա
Գերմանական կանացի արձակը
Ռուսական կայսրության պարբերականներում.
Գաբրիել Ռոյթերի պատմվածքների թարգմանությունները.....237

Վալերի Փիլոյան
Սցենարական հայտ-տագնապներ
Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակից.....254

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....275

CONTENTS

LINGUISTICS AND LANGUAGE TEACHING METHODS

Ella Avagyan
Ways of Expressing Modality on Semantico-Syntactic Level in German 8

Karine Arustamyan
The Semantic Expansion of the Color Name "Orange" in the Literary Text 20

Susanna Asatryan, Naira Poghosyan
Development of the Learners' Critical and
Creative Thinking in the Process of Teaching English 34

Lilit Brutian
Russian Compliments in Intercultural Space.....49

Anahit Grigoryan
Integrated Teaching of Words Expressing
Numeral Meanings in Elementary School 62

Nina Jaghinyan
Linguo-stylistic Analysis of Sherwood Anderson's Short Stories 75

Hovhannes Zakaryan
The Etymology of Several Armenian Words
with the Meaning «Slide», «Dive» etc.....89

Larisa Madenyan
On the Linguistic Value of a Student's Dictionary 105

Olga Makarowska
The Problem of Defining the Concepts "the Textual Image of the World" and
"the Linguistic Image of the Text".....118

Tinatin Mshvidobadze
The Effectiveness of Translation Technology
Tools in Intercultural Communication 130

Nataliya Peneva
Comparative Characteristics of Sonants [m], [m ']
in Russian and Bulgarian Languages 138

Ella Sargsyan
The Concept of "Bread" in Idiomatic Expressions in French and English: Comparative Analysis 148

Tadevos Tadevosyan
Urbanonym "Rotunda" in the Onomastic and Cultural Space of Great Karakilisa (Modern Vanadzor City).....158

LITERARY STUDIES

Naira Hambardzumyan
The Phenomenon of the Eternal Wanderer in Vahe Oshakan's Collection "Crossroads": Semantic and Time Interpenetrations 179

Gunsema Badueva
The Image of Neighbors in the Prose of B. Yekimov 191

Tamar Gogoladze
The Poet through the Prism of Everyday Life: A. Blok and G. Tabidze.....201

Taron Danielyan
Creative Activity of Priest Khoren Khanzadyan 208

Antonina Dongak
Tuvan Folklore and Buddhism 219

Natalya Nikonova, Yulia Seryagina
German Women's Prose in the Periodicals of the Russian Empire; Translations of Gabriele Reuter's Stories 237

Valery Piloyan
Scenario Alarm Requests in Hrant Matevosyan's Story "Hangover".....254

BRIEF INFORMATION ABOUT THE AUTHORS OF THE ARTICLES.....278

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

VI МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

«Язык и литература в контексте межкультурной коммуникации»

МАТЕРИАЛЫ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ

Ванадзор – 2023

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

VI ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում»

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վանաձոր – 2023

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TOUMANYAN

THE SIXTH INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE

"Language and Literature in the Context of Intercultural Communication"

MATERIALS OF INTERNATIONAL CONFERENCE

Vanadzor – 2023

Հայալեզու տեքստերի խմբագիր՝ Վալերի Փիլոյան
Օտարալեզու տեքստերի խմբագիր՝ Զառա Ալեքյան
Համակարգչային ձևավորող՝ Աշխեն Գալստյան

Վանաձոր – 2023

Корректор армяноязычных текстов: Валерий Пилоян
Корректор иноязычных текстов: Зара Алекян
Компьютерный дизайнер: Ашхен Галстян

Ванадзор – 2023

Proofreader of Texts in Armenian: Valeri Piloyan
Proofreader of Texts in Foreign Languages: Zara Alekyan
Computer Designer: Ashkhen Galstyan

Vanadzor – 2023

ISBN 978-9939-1-1685-3

9 789939 116853